USAID FROM THE AMERICAN PEOPLE

GORIS PRESS CLUB

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն



Հեղինակ՝ ***Քումունց Մ.***

Կազմողներ՝ ***Ղավալբաբունց Ա., Լալաբեկյան Ա., Խաչատրյան Ք., Բալասանյան Լ., Մինասյան Ն., Փանդունց Մ. Մկրտչյան Ա., Թավադյան Ա.:***

Մեր բանն ու գործը: Երևան: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատ., 2024, 55 էջ:

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի ինստիտուտ, 2024

Սույն ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով։

Ծրագրով կազմված գրքույկում ընդգրկված են զրույցներ, բանահյուսական նմուշներ, որոնք հավաքվել են Սյունիքի մարզի Գորիս համայնքի 10 բնակավայրերից։

Կարծիքների համար «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն պատասխանատվություն չի կրում, և պարտադիր չէ, որ գրքում ընդգրկված տեսակետները արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները։




Ծրագրի ղեկավար՝ Մհեր Քումունց




Անի Ղավալբաբունց

Կազմող-հեղինակներից՝ «քիսի-փիսի» անողներից լավագույնները...



Քրիստինե Խաչատրյան




Աստղիկ Ալաբեկյան



Նարինե Մինասյան



Լիլիթ Բալասանյան



Անի Մկրտչյան



Մանե Փանդունց



Ասյա Թավադյան

Բանասաց-պատմողներ՝ ***Խնձորեսկ՝*** *Ստելլա Գյուլնազարյան, 1965թ., **Գորիս՝** Վարդանյան Սուրիկ, 1946թ., Պետրոսյան Կարեն, 1957թ.* ***Վերիշեն՝*** *Հայրումյան Գագիկ, 1948թ., Օհանյան Գագիկ, 1952թ., **Բարձրավան՝** Մաթևոսյան Խանում, 1969թ., Հակոբյան Ասյա, 1848թ., **Շուռնուխ՝** Դարբինյան Սոնիկ, 1944թ., **Որոտան՝** Օհանջանյան Էլվերա, 1949 թ., Գրիգորյան Վարդիթեր, 1959թ. Գրիգորյան Ռայա, 1954թ., **Ակներ՝** Սահակյան Լևոն,1955թ., **Հարթաշեն՝** Գուսան Արմո, 1960թ., **Ներքին Խնձորեսկ՝** Բուդաղյան Նվարդ, 1956թ., Քարահունջ՝ Մկրտչյան Արմեն, 1967թ. և ուրիշներ:*

Գիրքը ձևավորվել է Գորիս համայնքի հոգևոր մշակութային արժեքները պահպանելու ազնիվ նպատակադրմամբ:

Հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Գրքում տեղ գտած բոլոր անունները հիշատակվում են պատմող-ասացողների թույլտվությամբ:

Ծրագրի ընթացքում ձևավորված բանավոր մշակութային արժեքները արխիվացված են:

Գիրքը հետազոտական ուղղվածություն ունի, ինչպես և՝ նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:

Խորհրդային միության փլուզումից հետո անկախ Հայաստանում նոր սերունդ է մեծացել: Անկախությունն իր հետ բերեց նոր իրականություն, պատերազմներ և ինքնության փնտրտուքներ: Հատկապես արցախյան պատերազմից հետո հանրության՝ դեպի ներս ուղղված հարցերը սրվեցին: Ջուգահեռ իրականության մեջ աշխարհը տեխնոլոգիական հերթական վերելքն էր ապրում: Արդյունքում, օրինակ՝ Գորիս քաղաքի երիտասարդները համացանցի օգնությամբ կարողանում են կապ հաստատել Ավստրալիայում բնակվող ընկերոջ հետ: Բայց առաջընթացը, որ մոտեցնում է հազարավոր կիլոմետրեր իրարից հեռու գտնվող մարդկանց, կարծես կտրում է հատկապես քաղաքաբնակ երիտասարդներին իրենց բնական միջավայրից և արմատներից:

«Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն»-ի կողմից նախաձեռնված մշակութային հետազոտությունը թերևս առաջին, բայց հաստատուն քայլն էր երիտասարդության համար՝ սեփական միջավայրը ճանաչելու, ինքնությանը հարցեր ուղղելու, վերարժևորելու և աշխարհին ու իրեն հասկանալու համար:

Զրույցներ սերունդների միջև: Հարցեր: Բացահայտումներ: Նորից հարցեր: Կարծես հին հայելում սեփական արտացոլանքի նոր տարբերակը գտած երիտասարդները նորից ու նորից նայում են իրենք իրենց աչքերի մեջ: Այս հետազոտությունը ևս մեկ անգամ եկավ ապացուցելու, որ որքան մենք գիտենք սեփական պատմության, հողի և ժողովրդի մասին, այնքան չբացահայտված մութ կողմեր, էջեր, պատմություններ և օրինաչափություններ ունենք: Դրանք հետագայում ուսումնասիրելն ու վերլուծելը գիտական երկար ու բարդ աշխատանք կպահանջի: Այդուհանդերձ առաջին քայլն արված է: Դեպի ինքնաճանաչողություն և ինքնաբացահայտում:

Վիանա Խաչատրյան, լրագրող, կլինիկական հոգեբան

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՎԵՃ ՈՒ ԿՈՒՎ... ՀԱՇՏՈՒԹՅՈ՞ՒՆ)

Վերիշեն

Պատմող՝ Օհանյան Գագիկ

1937 թվականին Աղասի Խանջյանը Հայաստանի կենտկոմի քարտուղար է եղել: Անհայտ անձինք սկսում են կեղծ լուրեր տարածել, թե նա դաշնակ է ու վատ մարդ: Եվ որ ամենավատն է, նրան մեղադրում են Բերիային սպանելու մեջ:

Խոսակցությանը ներկա է լինում Անդրանիկ Օհանյանը, որը, սակայն, ոչ մի խոսք չի ասում: Բայց այնպես է ստացվում, որ այնտեղ ասված ամեն մի բառ վերագրում են Անդրանիկին:

Լուրը կամաց- կամաց տարածվում է ամենուր: Ոստիկանները ձերբակալում են Անդրանիկին: Վերջինս մինչև վերջ պնդում է, որ ինքն այդպիսի բան չի ասել: Նրան չեն հավատում և քրեական գործ են հարուցում:

Թունավորվում է Անդրանիկի կյանքը. նա հայտնվում է անելանելի վիճակում: Դատը տեղի է ունենում Թիֆլիսում: Նրա ձեռքերից բռնած ու քարշ տալով՝ բերում են դատարան: Անդրանիկը կրկին պնդում է, որ ոչ մի վատ բան չի արել, սակայն այդ սենյակում գտնվում էին ևս վեց վկաներ, որոնք ցուցմունք են տալիս Անդրանիկի դեմ: Պարզվում է, որ այդ վկաները եկել են Գորիսից ու Անդրանիկի ընկերներն են: Անդրանիկը չի դիմանում այդ բարոյական հարվածին և ուշագնաց է լինում: Աչքերը բացում է, տեսնում, որ Մեհեխի բանտում է գտնվում՝ հոդվածով, ըստ որի՝ իրեն պիտի 24 ժամվա ընթացքում գնդակահարեն: Սոված-ծարավ ասում է՝ մի քիչ հաց տվեք՝ ուտեմ, նոր գնդակահարեք: Բարեբախտաբար, բանտապետը հայ է լինում և օգնում է, որ գնդակահարությունը փոխարինեն տասնհինգ տարվա խիստ ռեժիմի բանտարկությամբ: Անդրանիկին աքսորում են տայգա՝ փայտ կտրելու սառնամանիքների տակ: Բանտապետն ասում է. «Տղա՛ ջան, ջահել տղա ես, արի քեզ ուղարկեմ տայգա: Կկարողանաս, կապրես, չես կարողանա, այնտեղ կմահանաս»: Այդ նույն բանտում աշխատող բժիշկը վրացահայ է լինում, իսկ նրա հայրն էլ գրագետ մարդ է լինում, վերցնում է իր ձեռքի տակ: Ամեն օր սայլակներով գնում էին դիակներ հավաքելու: Օրական հինգ սայլակ դիակ էին հանում:

Որոշ ժամանակ անց Ստալինը մահանում է, և Անդրանիկին ազատում են բանտարկությունից: Ազատվելուց հետո Անդրանիկը առանց հապաղելու գալիս է Գորիս: Այդ ժամանակ Անդրանիկի ընկերներից մեկը՝ Պարգև անունով, ավտոբուսի վարորդ էր աշխատում: Երբ տեսնում է Անդրանիկին, զարմանում է, աչքերին չի հավատում: Անդրանիկը Պարգևին սկսում է պատմել իր գլխով անցածի մասին, նաև աքսորից իր՝ մորը գրած նամակի մասին. «Մա՛մ, կրիայի քայլերով գնում եմ գերեզման: Ինձ էլ նամակ չգրեք, հաշվեք՝ ես մահացած եմ»:

Պարգևը Անդրանիկին իր ավտոբուսով հասցնում է Գորիս՝ տուն. կանչում է՝ Ազի՛զ բիբի, Ազի՛զ բիբի (Անդրանիկի մոր անունն է): Պարգևը Ազիզ բիբիին հարցնում է. «Հըն, Անդրանիկից ինչ տեղեկություն կա»: Մայրն

ասում է, որ Անդրանիկն արդեն տասը տարի է, ինչ մահացած է: Անդրանիկը որ մեքենայից դուրս է գալիս, մոր ուշքը գնում է: Անդրանիկը երկու տարի անց՝ 37 տարեկան հասակում, ամուսնանում է և մեկ երեխա է ունենում, բայց երեխան մահանում է: Դրանից հետո նորից աքսորում են Սիբիր՝ Տայշկա կոչված գյուղը, դե իսկ գյուղացիներն էլ այստեղից-այնտեղից հավաքված ժողովուրդ էին: Ասում են, որ այստեղից փրկություն չկա, ով կարող է, թող աշխատանք գտնի, իր ընտանիքը ստեղծի ու լավից-վատից իր համար ապրի: Յոթ տարի անց կրկին վերադառնում են Գորիս: Անդրանիկը և իր կինը չորս երեխա են ունենում՝ երեք տղա ու մեկ աղջիկ: Ջորան էլ այնտեղ են ծնվել:

Շատ ժամանակ է անցնում, բայց Անդրանիկը չի կարողանում ներել այդ դավաճաններին իրենց արածի համար: Նրանց որտեղ տեսնում է, պախարակում է՝ ամենավերջին բառերն ասելով. «Շո՛ւն, ա՛յ շուն, արի՛ ստեղ»: Նրանց անունը չէր տալիս, միայն շուն էր կանչում:

Անդրանիկն այնքան հոդվածներ, օրենքներ գիտեր, որ խեղճացնում էր անգամ ոստիկաններին: Նա այնպես էր սեղաններ կառավարում, որ ասում էին՝ ինչ գրագետ մարդ է, կյանք տեսած մարդ:

Ջնայած իր գլխով անցածին՝ Անդրանիկը հետագայում երջանիկ է լինում՝ շրջապատված սիրող ընտանիքով, և դա ինչ-որ չափով մեղմում է իր ցավը: Ֆիզիկապես և բարոյապես խեղդված մարդը կարողանում է իր մեջ ուժ գտնել և վերստին ապրել իր սովորական կյանքով:

Այս պատմության մեջ ամենակարևորն այն է, որ այդ թշնամությունը վաղուց անցել է: Հիմա ամեն ինչ վերջացած է, 50- 60 տարի է անցել: Այդ մարդիկ էլ չկան, ոչ մեկը չկա, նրանց երեխաների կեսն էլ չկա: Օրինակ՝ նրա երեխայի երեխան անգամ ծնված չի եղել, ինչ մեղք ունի իր պապիկի գործած սխալի համար: Եվ կարող ենք վստահորեն ասել, որ այդ թշնամությունը ժամանակի ընթացքում մարել է:

Անմարդկային տառապանք տեսած մարդու մեջ չի մեռել հավատն առ մարդը, առ արդարությունը: Նա գիտե, որ ժամանակը՝ այդ մեծ դատավորը, կգա և հաշվեհարդար կտեսնի ստալինների և բերիաների հետ, և կրկին արդարությունը կվերականգնվի:



Ներքին Խնձորեսկ

Պատմող՝ Բուդաղյան Նվարդ

Ներքին Խնձորեսկի նախկին գյուղապետը մի քանի տարի առաջ չգիտես ինչ միջոցներով դառնում է այդ գյուղի գյուղապետ:

Գյուղը շատ բնակիչներ չունի: Երկար տարիներ գյուղում բնակվում էր մոտ երեսուն ընտանիք, իսկ վերջին շրջանում այդ թիվը աճեց և դարձավ քառասունչորս: Այնտեղ բնակվող մարդկանց մեծամասնությունն իր ապրուստը հող մշակելով է ստանում: Գյուղն ունի մոտ 435 վարելահող: Ամեն մի տուն ունի իրեն հասանելիք հողը: Սակայն մի ժամանակ առաջ գյուղապետը կեղծ թղթերի միջոցով այդ ամբողջ հողերը ժողովրդից խլում է և իր սեփական կարիքների համար է սկսում օգտագործել:

Երկար ժամանակ առանց ինչ-որ մեկին բաժին տալու նա այդ հողերը տնօրինել է: Տնօրինել է հերիք չէ, մի հատ էլ մեկ հողի վարձը դարձրել է 10600 դրամ, իսկ մինչև այդ եղել է հինգ-վեց հազար դրամ: Այդ հողի մեջ ինչքան խողովակաշար եղել է, հանել ու վաճառել է: Այդ ամենն իր սեփական նպատակների համար է օգտագործել և գյուղացիներին ոչնչով չի օգնել: Գյուղացիները սկսում են բողոքել: Նրանք նույնպես բաժնետեր են և բաժնեմաս ունեն հողերից: Քանի անգամ ասացին, որ այդ հողերից գուղացիներին էլ բաժին տա, բայց չլսեց ու չտվեց: Ժողովուրդն էլ, տեսնելով, թե ինչ է կատարվում և այլ ելք չունենալով, դիմեց համապատասխան մարմիններին: Ինչքան դիմեցին (այն ժամանակ Ռոբերտն էր), ինչ էլ արեցին, այդ ամենը ոչ մի արդյունք չտվեց:

Այլ տարբերակ չունենալով՝ ամբողջ գյուղով հավաքվեցին այդ հողերի մեջ ու չթողեցին, որ գյուղապետը հնձի:

Իրենք հնձեցին և գյուղին պատկանող պահեստամասում պահեստավորեցին, որ տեսնեն՝ այս գործի վերջն ինչ է լինում:

Գյուղապետը շատ կողմնակիցներ ունի, այդքան տարի աշխատում է, և մինչև հիմա պարզ չէ, թե որ ղեկավար մարմինն է նրա թիկունքին կանգնած:

Այնքան է ամեն ինչ բարդանում, որ գործը հասնում է դատարան: Դատարանը որոշեց, որ այդ մեկ տարվա խոտը և եղած եկամուտը տան գյուղապետին:

Գյուղը ամբողջությամբ շրջապատված է թշնամու դիրքերով: Դիմացը դիրք է, մի կողմը դիրք է: Եվ գյուղացիները, այդ ամենը հաշվի չառնելով, շարունակում են չլքել գյուղը և բնակվել այնտեղ:

Ներքին Խնձորեսկում ոչ մի տեսակի պետական աշխատանք չկա: Անասուն չեն կարողանում պահել, քանի որ անցնում է թշնամու կողմը: Գյուղն անգամ արոտավայր չունի, որ գյուղացին կարողանա գոնե այնտեղ անասուն պահել:

Գյուղապետը գնացել է Երևան և այնտեղ իր համար տներ է գնել: Նրա աղջիկը, այստեղ չապրելով, որոշ հողեր իր անունով է սեփականաշնորհել: Ինքը սեփականաշնորհումից օգտվել է ու նորից այդ հողերը վաճառել: Դրա պատճառով գյուղում մեծ վեճեր են առաջացել, ու դատական գործընթաց է սկսվել:

Գյուղացիները նամակով դիմել են Գորիս եկած Փաշինյանին, բայց մինչև հիմա

ոչ մի պատասխան չկա (ղեկավարը, որ ձայներ է հավաքում ու անցնում, բոլորի աչքի լույսն է դառնում, բայց հետո ժողովրդին թողում է այսպիսի բարդ իրավիճակի մեջ և չի ցանկանում օգնել)։

Այս անգամ էլ հենց Փաշինյանը եկավ, գյուղացիները մոտեցան նրան և ասացին, որ նամակ են գրել, բայց մինչև հիմա պատասխան չունեն։ Վարչապետը խոստացավ հարցին լուծում տալ։

Վարչապետի գնալուց հետո թուղթ է եկել, որ հարցը դատական գործընթացով պետք է լուծվի։

Հետո պարզվում է, որ գյուղապետը ներքին կարգով աճուրդի է հանել իր ընտանիքի անդամների վրա գրված հողերը։ Պետությունը մարդկանց մեկ անգամ է սեփականաշնորհման իրավունք տալիս. մինչև հիմա պարզ չէ, թե նա ինչպես է այդ հողերը նորից աճուրդի հանում։ Աճուրդի տակ ստորագրողները հիմա չկան։ Մեռած մարդկանց անունով աճուրդի է հանել, իբրև նրանք ստորագրել և թույլ են տվել, որ այդ հողերը վաճառի։ Ներկա դրությամբ դատական գործընթացը դեռ շարունակվում է։

Գյուղում երեսուն տղամարդ կա, երեսունին էլ ոստիկանությունը մեղավոր է ճանաչել։ Նրանք Ղարաբաղից ավելի վատ վիճակում են գտնվում։ Գոնե արցախցիները կարողացել են դուրս գալ, բա նրանք ո՞ւր գնան. ո՛չ հող են տալիս, ո՛չ անասուն պահելու տեղ։ Բա այդ գյուղացիները ինչո՞վ իրենց գոյությունը պահեն։ Այս շրջանում այդ երեսուն տղամարդկանց արդարացրել են և ազատել։ Հիմա էլ ասում են՝ իբրև մեկ տարվա խոտն ու ցորենը գյուղապետն է ցանել, ու պետք է տան իրեն։

Այսպես էլ այս խնդիրը լուծումը չի ստանում։

Մի օր էլ ոստիկանապետը Սյունիքի բոլոր ոստիկաններին հավաքել, բերել լցրել է այդ պահեստային մասը, որ բացեն, բոլորը տան գյուղապետին։ Երկու-երեք տարի ժողովուրդը ցանել, լցրել է այդ պահեստամասը, մինչև այդ հարցը պարզվի։ Գյուղով, երեխաներով, կանանցով ու տղամարդկանցով գնացին, մեջքները դեմ տվեցին դռանը և թույլ չտվեցին որ, որ դռները բացեն։ Ոստիկանապետը հրամայեց տիկին Նվարդի տղային բռնել։ Տղայի ձեռքերը կապեցին։ Նվարդն սկսեց ոստիկաններին քարերով հարվածել. էլ չէր նայում՝ դիմացը ով կա, ինչ կա։ Քարը վերցնում էր ու հարվածում։

Այդ գյուղի տղաները 1988թ.-ի պատերազմի մասնակիցներ են։ Զանգեցին, որ Մելոն գա։ Մելոն եկավ ու ոստիկաններին դուրս արեց գյուղից։

Այս իրադարձություններից վիրավորված ու բարկացած գյուղապետը ժողովրդի մասին ավել-պակաս խոսում է։ Գյուղացիները սպասում են գործի քննությանը։

Երբ ասացողը գյուղ է եկել, երևի այդ գյուղի հինգերորդ բնակիչն է եղել։ Ավարտել է գյուղտեխնիկումի հաշվապահական բաժինը, և նրան՝ որպես կրթություն ստացած մարդու, աշխատանքի են ընդունել գրադարանում։ 2017թ.-ին հրաման ընդունեցին, որ գրադարանները փակեն։ Տիկին Ն.-ի հիսունհինգ տարին երբ լրացավ, հետաքրքրվեց իր մանկավարժական ստաժով։ Պարզվեց, որ երեսունմեկ տարվա ստաժ ունի, իսկ տասներկու տարվա ստաժը կորել է։ Մանրամասն ուսումնասիրել է, որ

տեսնի՝ ինչ է կատարվում, բայց չարչարանքն իզուր է անցել։

Տիկին Ն., ավելի խորանալով այդ գործի մեջ, տեսավ, որ գյուղապետը մարդկանց վերևի գյուղից բերել է ու իր փոխարեն ֆիզ. ուղարկել։ Տասներկու կին, որ այդ գյուղի տեղն անգամ չգիտեն, խառնված են այդ գործին։

Տիկին Ն., այլ ելք չունենալով, դիմեց սոցնախարարություն։ Այնտեղից հրահանգում են, որ այդ գործն ուսումնասիրեն։ Տիկնոջն ասում են՝ որ այդ հարցով մոտենա Շ. Գ.-ին, որն էլ գյուղապետի համախոհն է։

Մի օր տիկին Ն.-ն գնում է Շ.-ի մոտ. վերջինս ասում է.. «Քեզ կխեղդեմ, կսպանեմ, եթե բերանդ բացել ես այս գործի համար»։ Տիկին Ն. էլ զարմանում է ու հարցնում.«Բայց դու ինչու՞ ինձ խեղդես, սպանես։ Երեսունմեկ տարի է՝ աշխատում եմ, դու պիտի նոր գաս ինձ խեղդես, սպանես։ Տարիքի՛ս նայիր, մազերիս սպիտակությա՛նը նայիր։ Էդ դու ի՞նչ ես դարձել... Որ բարձրակրունկ կոշիկներիդ վրա ես, սիրուն էլ հագնված, ուրեմն խելացի ես, իսկ մենք գաղափարապես կորա՞ծ ենք այդքան։ Մեջիցդ երկու կտոր կանեմ։ Ջիմանաս, թե ես այստեղ ինչ-որ կորած մարդ եմ»։

Հետո պարզվեց, որ գումար են ցանկանում այդ գործը կարգավորելու համար։ Ինքն իրավացի է, ինչու՞ պետք է գումար տա։

Մի քանի անգամ դիմել է աշխատանքի Սոցնախարարություն, մի անգամ՝ Արթուր Գրիգորյանին։ Անգամ դիմել է նախագահի աշխատակազմին։

Երեք տարի անց նախագահի աշխատակազմից եկան, ու մի օր էլ Շ.-ն զանգեց տիկին Ն-ին, կանչեց գյուղապետարան և ասաց, որ իր գործը պատրաստ է. արդեն ոչ մի խնդիր չկա։

Ամիսն անցավ, նրանք ոչ մի բան չարեցին. նույն տասներկու հազար թոշակն էր։ Մի օր տիկին Ն.-ն գնաց Գորիս՝ հետաքրքրվելու նույն գործով. նորից կռիվ, նորից վիճաբանություն։ Նախկին մարզպետը՝ Սուրիկ Խաչատրյանը, աստիճաններով իջնելիս տեսավ, թե ինչ է կատարվում և բարկացած հրահանգեց գործերը շտկել։

Ջանցած մի քանի օր՝ Շ.-ին գործից ազատեցին. իր թոշակը քառասունյոթ հազար ինը հարյուր դրամ դարձավ։ Այդ պատմության պատճառով ընտանիքներով իրար թշնամի դարձան։

Գյուղացիներից մեկի հարսը (ֆիզիոլոգիական արձակուրդ գնացած), վերևի գյուղում հանդիպեց տիկին Ն.-ին ու ասաց. «Թքեմ երեսիդ, էտ էլ բա՞ն էր, որ գնացիր բողոքեցիր»։ Դրանից հետո այդ կինը, թոշակի անցնելով, նույն վիճակում է հայտնվում և տիկին Ն.-ից ներողություն խնդրում. «Կներես, ես չեմ իմացել, թե ինչեր են կատարվում, ու քեզ անտեղի կոպտել եմ»։

Երբ 1988թ.-ի պատերազմը սկսվում է, գյուղ բենզին են բերում որպես օգնություն։ Գյուղապետն այդ ամենը նորից յուրացնում է։

Գյուղում գտնվող զինվորների հրամանատարին ու մի քանի գյուղացու ուզում են ծեծել։ Տիկին Ն.-ն փորձում է փրկել իրավիճակը և ասում է. «Հիմա մեր դարդը այս է. թուրքը այն կողմից մեզ կոտորում է, դուք էլ ներսում եք կոտորում, բա՛ց թողեք, թող ոադ լինի»։

Գյուղապետը պատերազմի ժամանակ թողնում ու հեռանում է Մոսկվա ու մինչև պատերազմի ավարտը գյուղ չի գալիս: Որոշ ժամանակ անց նորից վերադառնում է ու ժողովրդի «մխը ուտում»: Երբ գյուղը ռմբակոծվում էր, կանանց, երեխաներին դուրս էին հանել, որ տղամարդկանցով մնան: Կանանցից միայն տիկին Ն.-ն մնաց: Նա չորս երեխա ուներ, չորսին էլ ուղարկեց Երևան, որ հանգիստ լինի: Ամուսինն էլ ֆիդայի էր, իրենց տանը ճաշ էր եփում, որ կռվողները գան ուտեն: Բոլոր վիրավորներին բերում էին իր տուն. վարագույրն էլ էին միջից կտրում, ինչ է վերքը կապեն, ուղարկեն:

Այս ամենի մեջ ամենավատն այն է, որ գյուղապետը գոնե հիմա պետք է իր գյուղի կողքին լիներ: Միգուցե այդ դեպքում մարդիկ ներեին նրան՝ մտածելով, որ նա իր սխալը հասկացել է: Բայց նա անում է հակառակը և առանց խղճի խայթ զգալու մեկնում է Մոսկվա:

Թշնամությունը կամաց-կամաց խորը արմատներ է գցում գյուղում: Մի անգամ գյուղապետը «գողական աշխարհի» ներկայացուցիչ է ուղարկում տիկին Ն-ի տուն: Ուղարկում է՝ վախեցնելու, որ բերան չբացի: Գողականն էլ զենքը ձեռքին գալիս է, բայց ամեն մանրամասնություն իմանալով՝ անխոս թողնում-հեռանում է:

Որոշ ժամանակ անց գյուղապետին պաշտոնաթող են անում, բայց նա շարունակում է բնակվել գյուղում: Ամեն օր դուրս է գալիս և մարդկանց ասում, որ դատը ինքն է շահելու:

Գյուղացիներն ամոթանք են տալիս նրան իր արած սխալների համար:

Սա դեռ բոլորը չէ: Գյուղապետը պետք է պետության կողմից տրամադրված քսանյոթ միլիոնով հուշահամալիր կառուցած լիներ: Թղթերով կա, բայց հուշահամալիրի քարն անգամ չկա:

Այդ ժամանակ Երևանից Օնիկ Գասպարյանն է գալիս գյուղ ու ասում է, որ այդ տարածքները գյուղացիները չպետք է հնձեն: Տիկին Ն.-ն բարկանում է ու մի երեխա է ուղարկում, որ գյուղից երկու մոմ բերի դաշտը:

Փաստաբանն անընդհատ խոսում է և փորձում է գյուղացիներին համոզել: Տիկին Ն.-ն այլևս չի կարողանում իրեն զսպել և բարկացած ասում է. «Տղա՛ջան, այս երկու մոմը տա՛ր այն համալիրը, որը կառուցել եք այդ քսանյոթ միլիոնի դիմաց, որ հիմա չկա. կգնաս, կգտնես, մոմը այնտեղ վառես ու նոր գաս մեզ հետ խոսելու»:

Այդ իրադարձություններից որոշ ժամանակ անց մեկ այլ փաստաբան է գալիս գյուղ: Այդ փաստաբանին էլ գյուղացիներն այլ պատասխան են տալիս. «Լավ ես արել, որ եկել ես: Գնա՛, գյուղապետարանի բակում հարգանքի տուրքդ մատուցիր զոհվածներին ու հետո նոր գնանք, դաշտում զրուցենք»: Քանի փաստաբան եկավ, տեսավ, թե ինչքան մեծ է գյուղապետի մեղավորությունը, առանց ինչ-որ բան անելու թողեց-հեռացավ:

Դատական գործընթացը մինչև օրս շարունակվում է, ու պարզ չէ, թե ինչպես է ավարտվելու:

Գյուղացիների հույսը, որ իրենք անպայման շահելու են այդ գործը, շատ մեծ է: Բայց նույնիսկ այդ դեպքում նրանք պատրաստ չեն ներելու գյուղապետին, քանի որ հասցված վերքերը շատ խորն են ու անդարմանելի:

«Չէ, ինչի՞ համար ներենք: Թուրքը չի կարողացել մեզ վնասել, ինքը այսքան ժողովրդին...Դու գիտե՞ս քանի հոգի է նրա պատճառով անօգնական վիճակում մնացել: Քանի հոգի ուռուցքով հիվանդ են եղել, փող չի եղել, մեռել են: Մի կին 44 տարեկանում մահացել է երիկամի հիվանդությունից, շաքար ուներ, ճնշում, զոր ուներ ու դրան էլ գումարած՝ անօգնական էր: Նա ի վիճակի չէր որևէ բան անելու ու այդպես էլ անօգնական գնացին....Դու հա՛յ ես, թե՛ թուրք: Ներում չկա, այդպիսի մարդկանց ներում չկա: Ինչի՞ համար ներես», վրդովված եզրափակեց կինը:

Այս պատմության մեջ ամենակարևոր փաստն այն է, որ ամբողջ գյուղը մի բռունցք դարձած, ոտքի ելած պայքարում է այդ անարդարության դեմ: Նրանք իրար թիկունք դարձած, մեկ մարդու պես ցանկանում են հետ վերադարձնել իրենց իրավունքները: Եվ նրանց այդ միասնականությունն է, որ հույս է ներշնչում և՛ իրենց, և՛ մյուսներին:

... Նրանք անպայման հաղթելու են:









Հարթաշեն

Պատմող՝ **Գուսան Արմո (Մինասյան Արամայիս)**

-Դուք առհասարակ շփվո՞ղ մարդ եք։

-Անպայման։

-Իսկ հաճա՞խ եք լինում գյուղամիջում։

-Այո՛։

- Եղել է՝ ինչ-որ մեկի հետ ընդհարում ունենաք, ինչ-որ հարցի շուրջ չկարողանաք համաձայնության գալ։

-Դժվար է ասել. ընդհանրապես ինձ հետ մարդիկ չեն վիճում, բայց դե մարդ ես, ամեն ինչ էլ պատահում։ Բայց եթե մեկն ինձ հարգում է, ես էլ իրեն եմ հարգում։ Սիրում, հարգում եմ բոլորին, իրենք էլ՝ ինձ։

-Ասացիք, որ սկզբնապես դեմ են եղել ձեր ամուսնությանը։ Կարո՞ղ եք պատմել, թե ինչ զարգացում են ունեցել այդ դեպքերը։

-Ինչպե՞ս, պարզապես չեն թողել։ Տարիքով մեծ էի, ասել են՝ եթե լավ տղա է, ինչու՞ է այդ տարիքում ամուսնանում։ Ես էլ ասել եմ, որ լավ տղա եմ ու սպասել եմ ձեր աղջկան։

-Ընդհարում եղել է, թե....

-Ո՛չ, փոքրիկ խոսակցություն է եղել։ Մեկն ասել է. «Այստեղ թող չգա». երևի ինքն ավելի շատ է սիրել մեր հարսին։ Սիրել է, սեր է էլի։ Ես էլ ասել եմ՝ կտեսնենք՝ ով կհաղթի, ու հաղթել եմ։

-Ինչպե՞ս եք հաղթել։

-Դե իրենից շատ մեծ բան էր կախված, երևի ինքն էլ ինձ է ավելի շատ սիրել... Ես էլ գնացել նշան եմ դրել, բերել, ընտանիք կազմել, շատ խելացի երեխաներ ունեցել։ Երեք աղջիկներս համալսարան են ավարտել։

-Եղել է, որ կռվի ներկա լինեք։

-Իհարկե, շատ կռիվներ խաղաղեցրել եմ։

-Լավ, իսկ գյուղում կա՞ն մարդիկ, որ իրարից տևապես նեղացած են մնացել։

-Ընդհանրապես եթե երկու կամ երեք եղբայր են լինում, իրար հետ հաշտ չեն ապրում։

-Մեկ տարի, երկու տարի...

-Լինում է, որ հավերժ։ Օրինակ՝ պատմեմ հորեղբորս և հորս մասին, իրարից նեղացած էին։

-Ինչու՞։

-Նեղացած էին հողի, ապրուստի համար։

-Իրարից նեղացած մահացել են։

-Այո՛։ Մայրս ու հորեղբորս կինը երբեք իրարից նեղացած չեն եղել, բայց հայրս ու հորեղբայրս կյանքի կեսից ավելին իրարից նեղացած էին։ Մի անգամ այգում, որի կեսն իրենցն էր, կեսը՝ մերը, հայրս ու հորեղբայրս սկսում են կռվել, անվայել բառեր են ասում, իսկ մայրս ու հորեղբորս կինը միասին ծիծաղում էին։ Հայրս որ տեսնում է, ասում է. «Նրանց նայի՛ր, ամո՛թ մեզ, օտարները ծիծաղում են, իսկ մենք՝ կռվում»։ Հորեղբայրս այդ պահին ասում է. «Նրանք խելք չունեն, եթե ունենան, իրեք էլ կկռվեն»։ Մենք՝ երեխաներս, երբեք իրարից նեղացած չենք եղել...Մայրս ու հորեղբորս կինը չեն կռվել, միգուցե եղբայրներն ավելի խելացի էին։ Հայրս շատ չար էր, գործարար, աշխատող, իսկ հորեղբայրս՝ ծույլ, չաշխատող...Լավ պատմություն կա, պետք է

գրի առնեմ: Այն ժամանակ աշուղների մեջլիս է եղել: Մեր գյուղում մի անհայտ աշուղ կար, անհայտ էլ մահացել է: Որ ասում են՝ խռով գնացին...Մեր գյուղից՝ Ամիր Ղալա:

-Ամիր:

-Ամիր.

Ամիր Ղալա՝

Դարդի բալա,

Պատեր շարեց,

Առանց մալա...

Շատ խելացի մարդ է եղել, արվեստ սիրող, երգահան: Գիտե՞ք՝ այն ժամանակ աշուղներն ինչպես էին ապրում, գուսան Աշոտն ասում է. «Թարդ վերցրու՛, գնա՛ գյուղեր՝ նվագելու», իրենք գնացել ձու են հավաքել, այդպես ապրել: Ես պետք է աշխատանքով ապրեմ, ամաչում եմ գնամ, համերգ տամ, գումար վերցնեմ: Ամիր Ղալան երգահան էր...Քարաշենցի աշուղ Աթանի մասին լսել եք, նա հիշվում է, բայց Ամիրը չկա: Նա մի այգի ուներ, որը հիմա կա, ժայռի վրա տուն էր սարքել...Այնախլու: Այնտեղ աշխատելու ժամանակ Աթանը գալիս անցնում է, որ գնա մեջլիս, տեսնում է Ամիրին, ով առանց մալա պատ է շարում ու միշտ իրեն հաղթում է երգով, մոտենում, ասում է. «Դու ի՛նչ աշուղ ես առանց սազի, սազ չունես, երգում ես, մալա չունես, պատ ես շարում», Ամիրը, ցեխոտ ձեռքերը մաքրելով, ասում է. «Եթե իմանաս Կորվա եկեղեցին, Շուշիի ղալան, միշտ փալան, Ամիրն էլ ի՛նչ է անում մալան, Ամիր ղալա՝ դարդի բալա, պատ ես անում առանց մալա»:

Այդ մարդն իմաստուն մտքեր ուներ, անհետացել, ամեն բան իր հետ տարել է... Հնձանի ճամփին այսպիսի մտքեր է ասել. «Այգու կարմիր գինին շատ խմողին տույժ է տալիս, քիչ խմողին ուժ է տալիս»: Այսինքն՝ պետք է քիչ խմես, որ ուժ տա քեզ, շատ խմես՝ տույժ կտա քեզ: Այնպես էր հանգավորում...

-Ունե՞ք ստեղծագործություն, որ խռով ժամանակ եք գրել:

-Այդպես շատ կա, պետք է մտածեմ: Եղել է, որ նեղանամ հարսից, հարազատից:

-Իսկ նախկինում եղե՞լ է, որ հարսանիքի ժամանակ կռվեն:

-Այո՛: Գնում ենք Շինուհայր՝ հարսանիքի, ես՝ որպես պարբաշի: Այն ժամանակ մեքենա ունեի, երիտասարդ էի, գնում ենք հարսանիք: Տան դռան դիմաց մեզ դիմավորում է հարսի բարեկամներից մի աղջիկ, որ պետք է իմ ու փեսայի ձեռքին քող կապեր: Սկզբում չգիտեի, թե այդ աղջիկը ինչ պետք է աներ: Այդ աղջիկը քողը պետք է ձեռքիս ներքևից կապեր, բայց նա վերևից է կապում: Ու այդ պահին կողքից ասում են, որ եթե վերևից կապում է, ստացվում է, որ իրենք են հաղթում: Հենց որ լսում եմ, չեմ թողնում, որ շարունակի,ասում եմ, որ հեռու գնա, ու նա էլ առանց բառ ասելու թողնում ու գնում է:

Մեզ հետ Վերիշենից մի կին կար՝ անունը Ծիլեր (մահացել է), փեսայի քենին էր: Պարի ժամանակ մի աղջիկ անընդհատ գալիս ու «կպնում էր» մեզ: Ես փորձում էի հեռու գնալ, որ ապագա կինս չտեսնի ու չխանդի: Ամեն կերպ փորձում եմ հեռու տանել այդ կնոջը, բայց մեկ էլ տեսնեմ, որ կինը մատը թափահարում է: Արդեն պարզ էր, որ կռիվ է սկսվելու. մեզ գցում են աստիճաններից ցած ու սկսում ափսեներով խփել: Փրկվում ենք, հարսին փախցնում, մեզ հետ բերում: Մեզնից հետո երաժիշտներին շարունակում են ծեծել: Հաջորդ օրն առանց

հարսի հարազատների հարսանիք ենք անում։

Մինչև հիմա այս ամենն ինձ համար սարսափ պատմություն է. որ գնում եմ Շինուհայր ու մարդ եմ տեսնում դրսում, հեռանում եմ տարածքից՝ չնայած նրան, որ չեմ վախենում, ուղղակի արդեն ամեն կերպ զգուշանում եմ։

-Տեսակով ինչպիսի՞ մարդ եք։

-Մի քիչ զայրացկոտ եմ, բանակում ծառայելու ժամանակ այդքան զինվորների մեջ ոչ մեկը չկարողացավ ինձ բան ասել...բայց կրակը կամաց-կամաց մարում է. տարիքի հետ կապված բան է։ Հիմա բարկանում եմ հիշողություն չունենալու պատճառով։ Օրինակ՝ ցաքատը ձեռքիս է լինում, բայց կնոջս հարցնում եմ, թե այն ուր է։ Նա էլ ասում է. «Հոգիս կերար, ձեռքիդ է»։

-Խեղճ հարսն ինչպե՞ս է դիմանում։

-Ասում ես՝ ոնց է դիմանում, ուրեմն հորեղբայրս ու հայրս այգում կռվում են, հորեղբայրս գալիս է մարդամեջ ու Հենո անունով մեկին ասում, որ իրեն հարցնի. «Յա՛շկա, դու ինչ մարդ ես»։ Հորեղբորս ասում էին Սարուխանի Յաշկա։ Հենոն հարցնում է, իսկ հորեղբայրս պատասխանում է. «Այնքան բախտավոր եմ, որ ես և Մարտունը զույգ չենք եղել, թե չէ մեր մոր փորում ինձ կխեղդեր, որ ինքը մենակ դուրս գար»։

-Լավ հարևաններ ունեք։

-Ընտիր։

-Նրանց հետ կռվե՞լ եք։

-Ո՛չ։

Ասացողի աղջիկը հայրիկին մի պատմություն հիշեցրեց։

-Ընդհանրապես մեր հարսը շատ հանգիստ է, շատ...Մեր տան դիմաց աղբանոց էր, Աննայի մայրը եկել, այուներ էր ամրացնում, ժասոյին ասել էի, որ չթողնի։ Հետո եկել տեսել եմ՝ այուները ամրացված են, բարկացել եմ, գնացել, որ այուները հանեմ, չեմ կարողացել, սկսել եմ ժասոյի վրա բարկանալ։ Ժասոն գնաց, չգիտեմ՝ ինչպես այուները հանեց։ Ես երկու ձեռքով չկարողացա, ինքը հանեց. մինչև հիմա վախենում են նրանից։







Քարահունջ

*Պատմող՝ **Մկրտչյան Արմեն***

Գյուղերում վեճերը հաճախ նույն պատճառներից են առաջանում. տները՝ իրար մոտ, բակերը՝ գրեթե կպած, ու այդտեղից էլ սկսվում են վեճերը: Ասում են՝ մեկի տան կտուրն է մյուսի տունը ծածկում, կամ մի ծառը մյուսի բակին ստվեր է գցում: Այդպիսի վեճերից մեկն էլ Արփինե Մկրտչյանի ընտանիքում էր: Արփինեն պատմում էր, որ իրենց և հարևանների միջև վեճը տանիքից էր սկսվել: Նրա տատը տարիներ առաջ ցանկացել էր իրենց բակում տուն կառուցել, բայց հարևաններն ասել էին, որ տունը կփակի արևի լույսը: Հետո պարզվեց, որ այդ վեճն ավելի խոր արմատներ ուներ, քան պարզապես մեկ ծառի հարցն էր: Տատը միշտ պատմում էր, որ իրենց տունը նախկինում մեծ, ընդհանուր հացատուն էր եղել, որը հետո մասնատվել էր: Պատերազմի տարիներին Արփինեի պապիկը գնացել էր ռազմաճակատ, իսկ տատը մնացել էր տանը՝ մեծացնելով իրենց 7 տղաներին: Տատը հաճախ ժպիտով էր հիշում, թե ինչպես էր մեկ-մեկ մարդկանց զարմացնում. «Ինչպե՞ս եմ 7 տղա ունեցել 7 տարում, գրեթե ամեն տարի մեկը ծնվել է»: Եվ դա դեռ ամենը չէր. նա նաև զույգ տղա էր ունեցել:

Այդ դժվար տարիները միայն աշխատասիրությամբ չէր հաղթահարում. տատը մի օր հավաքել էր իրենց ունեցած արաղը (օղին) ու գնացել Բաքու՝ վաճառելու: Դրանով էր կարողանում տուն պահել ու երեխաներին մեծացնել, մինչ պապիկը հեռու էր՝ պատերազմում:

Տարիներ անց վեճերն էլ շարունակվում էին, ինչպես և հողի հարցերը: Երբեմնի այն տները, որոնք մի ժամանակ միասին էին եղել, բաժանվում էին, բայց վեճերը մնում էին նույնը: Վեճը ծագել էր, երբ տունը կառուցում էին պապիկի եղբայրն ու նրա ընտանիքը: Մյուս եղբայրը, որ պատերազմից վերադարձել էր, չէր ցանկանում՝ այդտեղ տուն կառուցվեր այն պատճառաբանությամբ, որ արևը կկտրի: Բայց տատիկը, ով իրոք համարձակ կին էր, չլսեց: Տան կառուցումն սկսվեց՝ վեճերի, անգամ ծեծկռտուքի ուղեկցությամբ: Ի վերջո տունը կառուցվեց:

Տարիների ընթացքում, բնականաբար, կենցաղային վեճեր ծագում էին հատկապես այն ժամանակ, երբ ջրերն ու ձյունը թափվում էին իրենց բակի մեջ: Մեծերը հաճախ կռվում էին նման պատճառներով, և նրանց վիճաբանություններն անխուսափելիորեն ազդում էին նաև երիտասարդ սերնդի վրա:

Արմենն ու Արփինեն, այն ժամանակ դեռ երիտասարդներ, հոգնել էին այդ վիճաբանություններից և փորձում էին հաշտվել:

Մի օր, երբ հաշտվելու ցանկությունն արդեն ուժեղ էր, Արփինեն Արմենին հրավիրեց սուրճի: Արմենը չհրաժարվեց: Արփինեն մորն զգուշացրեց, որ մարդ է եկել տուն: Արփինեի մայրը՝ Ռոզին, մի յուրահատուկ ու տպավորիչ կին էր. տեսավ Արմենին, և պատասխանը չուշացավ.

– Հը՛մմ, դու էլ դրան մարդ ես համարում:

Արմենը ժպտաց, իսկ Արփինեն զգաց, որ լարվածությունը կամաց-կամաց սկսում է մարել: Այն ժամանակ, թեև մեծերը դեռ խռով էին միմյանցից, ամեն ինչ հաշտության կողմն էր գնում: Իսկ Ռոզին, չնայած իր խոսքերին, ի վերջո ընդունեց Արմենին: Այդ

ժամանակվա խնդիրներից մեկը նրանց տանիքների վիճակն էր: Մեկ տանիք էր, բայց իրենց տանիքը վերևում էր, իսկ Արմենենցը՝ ներքևում: Երբ վերևի տանիքը չէին նորոգում, ջուրը կաթում էր ներքև՝ Արմենենց տան վրա: Տանիքներն այնքան էին իրար մոտ, որ ամեն մի խնդիր անմիջապես ազդում էր մյուսի վրա:

Արմենն ու Արփինեն, լավ հարաբերությունների մեջ լինելով, իրենք իրենց հարց տվեցին. «Ինչքա՞ն կարելի է բարեկամներով կռիվ անել»: Եվ այսպես, տանիքի ընդհանուր մասը, որը համարյա թե խորհրդանիշ էր նրանց տարաձայնությունների, դարձավ հաշտության ճանապարհ: Երբ տեսավ, որ վերևի տանիքը չեն սարքում, Արմենը որոշեց գործել: Այդ օրը նա վերանորոգեց տանիքը՝ վերջ դնելով երկար տարիների կաթոցներին: Դա պարզ մի քայլ էր, բայց մեծ նշանակություն ունեցավ: Քիչ-քիչ տները հաշտվեցին: Նոր սերունդը չհետևեց մեծերի օրինակին, այլ որոշեց լուծել խնդիրները խաղաղ ճանապարհով:

Օրերը անցան, և նրանք կրկին միասին սկսեցին իրենց առօրյան: Առավոտյան ընդհանուր բակում միասին նախաճաշում էին, երեկոյան հավաքվում հետաքրքիր զրույցի շուրջ: Այդպիսով, խռովություններն անցան, և նրանք սովորական ու պարզ քայլերով վերականգնեցին իրենց բարեկամությունը:

Պատմում են նաև հետևյալ պատմությունը: Գյուղում նախագահական ընտրությունները միշտ եղել են թեժ և լարված: Մալաքո Արտոն իր կյանքի մեծ մասը նվիրել էր գյուղի անվտանգությանը: Նա այգեպան էր, Հարժիս գյուղի սահմաններում՝ հսկիչ: Մարդը տարիներ շարունակ գնացել էր մեր սահմանները պահելու, ու մարդիկ նրան վստահում էին. գիտեին, որ նա միշտ պատրաստ է գյուղի կարիքներին արձագանքելու: 2000թ.-ին, երբ գյուղում նորից ընտրություններ էին, և այս անգամ գյուղացիները որոշեցին, որ հենց Արտոն պիտի դառնա նախագահ: Կրթական ցենզն ու մյուս հարցերը ոչ ոքի չէին հետաքրքրում: Ժողովուրդն ավելի շատ փնտրում էր այնպիսի մարդու, ով բուն գործով էր գյուղի խնդիրները լուծում, և այդ մարդը հենց Արտոն էր: Մալաքո Արտոն, ով տարիներ շարունակ գյուղի նախագահն էր եղել, կրկին կանգնած էր ընտրությունների շեմին: Հավաքվել էին բոլորը. մի մասը՝ նրա կողքին, մյուս մասը՝ նոր թեկնածուի: Նախընտրական հանդիպման ժամանակ Արտոն բարձրացավ բեմ և ինքնավստահ սկսեց խոսել, հորդորել գյուղացիներին, որ ընտրեն իրեն: Բայց այդ պահին հավաքվածներից մեկը՝ այն մարդը, ով արդեն վաղուց խռով էր Արտոյից, անսպասելիորեն վեր կացավ ու արձագանքեց բարձր ձայնով.

– Դու ինչ նախագահ, դու օգնություն ես ստացել, ոսպը, գարոխը գողացել ես, ժողովրդին չես բաժանել, տարել ես, լցրել գետը: Տեսնողներ եղել են, բոլորը գիտեն այդ ամենի մասին:

Նա փորձեց ինչ-որ կերպ պատասխանել, բայց նախագահի նոր թեկնածուն, որը միշտ պատրաստ էր արագ արձագանքելու, շրջվեց դեպի ժողովուրդը և ձեռքը դեպի ամբոխը պարզելով՝ ասաց.

– Ա՛յ ժողովուրդ, ես իր հետ խոսում եմ ու նա չի պատասխանում, այլ ինքն է ինձ հարցեր տալիս, դուք տեսնո՞ւմ եք սա:

Սովետական ժամանակներում կթվորանասնապահներին մեծ պատիվ էին տալիս: Մարտի 8-ին կանանց համար հատուկ

պարգևատրումներ էին կազմակերպում՝ նրանց աշխատանքն ու նվիրումը գնահատելով։

Կանանցից մեկը՝ Բադուն Էմման, պատմում է.

– Այն ժամանակ ամեն ինչ չկար, հիմա ամեն ինչ կա, բայց փող է պետք։ Այն ժամանակ էլ կար, բայց տակից էին տալիս։ Գնացի, նախագահին մոտեցա, գորգ ուզեցի։

-Ես ոչ մի բան չեմ կարող անել, պետությանը պետք է որոշ քանակով ձու տաս, որ քեզ գորգ տանք, - բացատրեց նախագահը։

Էմման էլ բարկացած ասաց նախագահին . «Դե գնա՛, քամակդ բացի՛, տեսնենք՝ կարո՞ղ ես այս եղանակին մեկ ձու էլ ածել»։







ԿԻՆԸ՝ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԳԱՐԴ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԹԵԼԱԴՐՈՂ, ԹԵ ԿԻՆ

Բարձրավան

Մաթևոսյան Խանումը պատմում է, որ ինքը երկար տարիներ աշխատել է դպրոցում՝ որպես ուսուցչուհի, իսկ այժմ գրադարանավարուհի է: Նա նշում է, որ տանը պահպանում է բոլոր ավանդույթները: Շատ աշխատասեր կին է, ասում է. «Էն, ինչ որ դաշտից պիտի բերվի մեր տուն, ես երբեք ուրիշից չեմ ուզելու: Պիտի անպայման իմը լինի: Եթե քաղաքից էլ մի մարդ գա, պիտի մի փոքր լավություն անենք, բաժին հանենք դրանից»:

Խանումը շարունակում է, որ 1990-ականներին, ամուսնու հետ տեղափոխվել և ապրել են Աղբուլաղ գյուղում՝ անասուն պահելու նպատակով: Նա նշում է, որ եղել են դեպքեր, երբ առանց ամուսնու մնացել է այնտեղ՝ գենքը ձեռքին ամբողջ գիշեր հսկելով տունը: Նա պատմում է, որ ազատամարտիկները նույնպես գյուղում են եղել, որոնց թվում նաև իր ամուսինը, և նրանց համար ինքը միշտ ճաշ էր պատրաստում: Դրա հետ կապված մի դեպք պատմեց.

«Մի մարդ վերևից կանչում է, հեյ տնատեր, ճաշը թափվում ա: Տուս եմ գալիս ու ասում, աչքս լույս, որ ճաշը թափվում ա: Տիր տափին. ես «ծզետի» ճաշ եմ եփում, իսկ դուք էլ ինձ վրա միննաթ եք կապում»:

Նա հիշում է, որ մի անգամ ձիով գնացել էր ճուղուպերի (ընկույզի), իսկ վերադառնալիս ձին խրտնել է, և ինքը մի կերպ է իրեն պահել, չի ընկել ձիուց: Ամուսինը շուտ է մահացել, և Խանումն իր պատմության մեջ նշում է, որ հաղթահարել է բոլոր փորձությունները. «Մարդու գլխին ամեն բան էլ կարող է պատահել: Մինչև երեխաների մեծանալը խոտ էլ եմ հնձել, տավար էլ եմ պահել, լավ պանիր ու յուղ էլ եմ պատրաստել: Ամեն ինչ արել եմ: Պապիկն ու տատիկն էլ ինձ օգնել են»:

Որոտան

Թևոսյան Գառնիկը ներկայացնում է իր մոր հերոսական աշխատանքները պատերազմի ժամանակ: Նա պատմում է, որ մայրը ցերեկները աշխատել է դաշտում, իսկ գիշերները հաց թխել՝ միաժամանակ խնամելով երեք որբ երեխաների:

Նրա կինը՝ Գրիգորյան Ռայան, անդրադառնում է իր և ամուսնու հարաբերություններին՝ պատմելով, որ ինքը ամուսնու երեխաներին ընդունել է այնպես, ինչպես սեփական երեխաներին: Նա նաև կարևորում է իր աշխատանքը որպես ուսուցչուհի և իր սերտ կապը աշակերտների հետ՝ նշելով, որ նրանց վերաբերվում է այնպես, ինչպես սեփական երեխաներին:

Ռայան իր պատմության մեջ ներկայացնում է նաև իր տեսակետը ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարությունների վերաբերյալ՝ նշելով, որ դրանք հեշտացրել են կանանց աշխատանքը: Այնուամենայնիվ, նա նշում է, որ պետք է զգուշությամբ մոտենալ դրանց:

Շուռնուխ

Խաչատրյան Ֆլորան պատմում է, որ իր ամուսինը երկար տարիներ բանտում է եղել, ինչը ցույց է տալիս, որ նա միայնակ է տարել կյանքի դժվարությունները: Այնուհետև ամուսինը մահացել է, և այժմ ինքը մենակ է ապրում, քանի որ երեխաները գոնվում են արտերկրում: Ֆլորան ակտիվորեն զբաղվում է այգեգործությամբ և ապրում է իր սեփական բերքով, չի վաճառում այն, այլ կիսում է հարևանների և այլ մարդկանց հետ: Նա նշում է, որ չի կարող լքել գյուղը՝ ասելով. «Ժամանակի ընթացքում վերադառնում եմ իմ քաղցր հիշողություններին, երբ ամուսինս դեռ կենդանի էր: Ցավում եմ, որ ամեն ինչ թողնեմ ու գնամ այստեղից»: Ֆլորան պատմում է, որ մեկ անգամ երազում տեսել է իր մահը և երազում ասես խոսել է իր մահացած ամուսնու հետ, որն ասել է. «Թաղի՛ր ինձ, Ֆլորա՛, մի անգամ էլ կլացես ինձ համար»: Նա պատմում է, որ երազում խեղդվում էր, քնից արթնացել է և սկսել լաց լինել:

Գորիս

Աղայան Սոսիկը պատմում է, որ ինքը երկար տարիներ աշխատել է դպրոցում որպես մանկավարժ: Իրական մանկավարժի կերպար է եղել: Ասում է, որ բնույթով ինքը զուսպ կին է եղել, նույնիսկ իր երեխաներին չի համբուրել, բայց դպրոցի երեխաների նկատմամբ մեծ հոգատարություն է ունեցել, հատկապես թույլ սովորող երեխաների հանդեպ: Նա պատմում է բազմաթիվ հետաքրքրական դեպքեր իր աշակերտների կյանքից, որոնք, ինչպես ինքն է ասում, ամբողջ կյանքում չեն մոռացվի:

Աղայանը հիշում է նաև իր սկեսուրի պատմածը իր ամուսնության մասին: Սկեսրայրն ասել է. «Խե՛ չես տղուտ պսակում, մեր բոստանը քանի՞ մինա չորնալու»: Ասում է. «Աղունը մի աղջիկ ունի, երբ կովը գնում է դաշտ, նա գոմը սրբում է, կյարման (աթարը) ոտով հավասարեցնում, իմանում ես թե պալատ է սարքել: Բայց որ գոմից դուրս է գալիս, մինչև եկեղեցին անցնելը ինչ տղա-աղջիկ է տեսնում, սկսում է ծեծել: Աղջիկը սիրուն ա, բայց լաչառ: Մեր տուն պետք է այդպիսին բերենք»:

Ներքին Խնձորեսկ

Նվարդ Բուդաղյանը պատմում է, որ տնային պարտականությունները հավասարապես կիսվում են իր և հարսի միջև, որի հետ երկար տարիներ միասին են ապրում: Նա ընդգծում է, որ իրար երբեք չեն վիրավորել կամ ավելորդ բառեր թույլ տվել: Հիմնականում զբաղվում է հողագործությամբ և ակտիվորեն մասնակցում է թոռների դաստիարակությանը: Նա պատմում է նաև իր՝ հարս լինելու տարիների դժվարությունների մասին՝ նշելով, որ երբ ինքը նոր էր հարս եկել, մի քանի օրվա ընթացքում իրեն նվիրած ոսկիները ձեռքից վերցրել են:

Ներքին Խնձորեսկցի կինը պատմում է մի զավեշտալի դեպք. «Մի անգամ մի զույգ կոշիկ են առել, ասացին՝ տանը կհագնես: Ինձ համար զարմանալի էր, էնքան միամիտ

էի, հագա տանը՝ ներսում: Հետո պարզվեց, որ «իրենց մեծ հարթնին վոնդին հոպ էր տվալ, տվալ էին ինձ, որ հագնեմ, ու հետո նոր տան իրենց հարսին»:

Հարթաշեն

Փարսյան Ալվարդը պատմում է, որ դաժան մանկություն է ունեցել: Իր սկեսուրն ու մայրը վաղ տարիքում կորցրել են իրենց ամուսիններին՝ յուրաքանչյուրն ունենալով երեքից չորս երեխա, որոնց մեծացրել են դժվար պայմաններում: Ալվարդը հիշում է սկեսուրի պատմածը, թե ինչպես էր քարեր լցրել ղազանի մեջ՝ երեխաներին խաբելով, թե կարտոֆիլ է եփում: Երեխաները քնել են ու սովից չեն լացել, իսկ առավոտյան, երբ արթնացել են ու հարցրել՝ որտեղ է կարտոֆիլը, մայրը պատասխանել է, որ «քնով է անցել է, կարտոֆիլը շատ եփելուց վերջացել է»: Սկեսուրը մեծ երախտագիտությամբ էր հիշում Տաթևում ապրող քրոջը՝ ասելով, որ եթե նա չլիներ, երեխաները սովից կմահանայինն:

Խաչո անունով պարտիզանը նույնպես հիշատակվում է Ալվարդի պատմության մեջ: Խնձորեսկը եղել է պարտիզանների հիմնական հավաքատեղին: Երբ դաշնակցականները եկել են Խաչոյի տուն ու կնոջից հարցրել ամուսնու գտնվելու վայրը, կինը չի հայտնել ոչ մի տվյալ: Որպես պատիժ՝ դաշնակցականները նրան տանջանքների են ենթարկել, փորձել են ձորից գցել ցած, սակայն կինը հրաշքով ողջ է մնացել: Երբ դաշնակցականներն իմացել են, որ կինը ողջ է մնացել, վերադարձել են գյուղ ու նրան քարկոծելով սպանել:

Մինասյան Արամայիսը պատմում է իր սիրո պատմությունը. իր ու կնոջ ամուսնության դեմ են եղել կնոջ հարազատները: Սակայն իրենք կարողացել են հաղթահարել բոլոր դժվարությունները և այժմ երջանիկ ապրում են միասին: Արամայիսը նշում է, որ իրենք միասին են կայացնում որոշումները, սակայն վերջին խոսքը կնոջն է պատկանում: Նա նաև գրում է երգեր իր կնոջ համար, որոնցից մեկը ներկայացրել է.

«Շողշողում էր իր դեմքին արեգակի շողն աշխեջ,
երբ կուգար՝ խմելու ջրի կանգակ աղբյուրից,
Իմ վառվող շուրթերով համբույր տվի սիրատենչ,
Կարծես բույրը կգացի սարվոր յարիս համբույրի»:

Ակներ

Սալբունց Քնարիկը մեծապես կարևորում է իր դերը վեց երեխաների դաստիարակության գործում՝ այն համարելով հերոսական սխրանք: Երիտասարդ տարիքում զբաղվել է գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ, սակայն այժմ այլևս չի կարող այդ աշխատանքներով զբաղվել առողջական խնդիրների պատճառով: Նա նշում է, որ իր սկեսուրն ու սկեսրայրը շատ բարի մարդիկ են եղել և իրեն վերաբերվել են հարազատ աղջկա պես:

Սահակյան Լևոնը պատմում է Հայրենական պատերազմի ժամանակ Ակներ գյուղում ստեղծված ծանր պայմանների մասին: Երբ հաց չի եղել գյուղում, երկու ակներցի կին իրենց խուրջինները լցրել են կարտոֆիլով և գնացել Հարժիս գյուղ՝

կարտոֆիլը ցորենի հետ փոխանակելու: Սակայն վերադառնալիս ընկել են ձնաբուքի տակ: Բարեբախտաբար, նրանք սառած ու կիսամեռ վիճակում հասել են տուն:

Լևոնը, անդրադառնալով ընտանիքում կնոջ դերին, արտահայտում է հետաքրքիր միտք՝ նշելով, որ հայ տղամարդը իր կնոջը չի պահում գլխի վրա, այլ ուսերին: Այսինքն, առաջինը գլուխն է, հետո կինը: Սա հայկական ավանդական օրենք է, որը, ըստ Լևոնի, ճշմարիտ է. տղամարդը պետք է լինի օջախի գլխավոր պատվարն ու հենարանը: Կինը այս ընթացքում ստորացված չէ այլ հակառակը՝ ավելի երջանիկ է, որ ունի «գլուխ», ունի պահապան ուժ, որը պահում է թե՛ կնոջը, թե՛ զավակներին:

Քարահունջ

Մկրտչյանը պատմում է՝ երբ թշնամիները հարձակվել են գյուղի վրա, գյուղացիները մի տատիկի կատակով հարցրել են, թե ինքն էլ է փախչում: Տատիկն էլ պատասխանել է՝ բա ինչ եմ անում, ես էլ եմ գնում, ութսուն տարի նամուս պահած-պահած՝ թուրքերին տա՞մ:

Նաև պատմում է իր ընտանիքի կանանց ուժի ու տոկունության մասին: Այդպիսին էր իր տատը, ով ունեցել է յոթ երեխա և պահել նրանց միայնակ, քանի որ ամուսինը զոհվել էր Հայրենական պատերազմում: Տատը պատմել է, որ երբ ամուսնու «սև թուղթը» եկել է, ինքն անգամ ցանկացել է ցած նետվել ձորից, սակայն հրաժարվել է այդ մտքից. ու՞մ հույսին պետք է թողներ իր երեխաներին: Տունն ու երեխաներին պահելու գործում նրան օգնել է մեծ տղան: Տատը միշտ ասում էր, որ, ճիշտ է, նոր հագուստ չէր կարողացել գնել երեխաների համար, բայց նրանց հագուստը միշտ մաքուր ու կարկատած է եղել: Տատը զբաղվել է գյուղատնտեսական աշխատանքներով և հիմնականում դրանով կարողացել է պահել իր ընտանիքը՝ փոքր այգուց հավաքելով ձմռան պաշարը և վաճառելով այն:

Ինչ վերաբերում է մորը, նա դժգոհ է եղել սկեսուրից: Մայրն ամուսնացել է շատ վաղ՝ տասնհինգ տարեկանում: Սկեսուրը համաձայն չի եղել այս ամուսնությանը՝ որդուն ասելով. «Նա կընգացույա՞, որ բերում ես»: Սակայն հայրը չի հրաժարվել մորից: Մոր ծնողները միայն աղջիկ երեխաներ էին ունեցել և ձգտել էին բոլորին արագ ամուսնացնել: Տատն է մորը ամեն ինչ սովորեցրել: Թեև մայրը կատարել է բոլոր գործերը՝ այգիներ ջրել, կովերի հերթ գնալ (սիրա), նույնիսկ հղի ժամանակ բարձրացել է ծառը՝ թութ թափելու, այնուամենայնիվ տանը միշտ դժգոհություններ եղել են: Մորը դիմել են անունով, իսկ տատին՝ «մամա», կարծես մայրը իրավազուրկ էր այդ ընտանիքում: Երբեմն տատը կռիվ էր գցում, բողոքում հորը և հարսին դուրս էր անում տնից: Սակայն այլ երկրում ապրող հարսներին տատը միշտ լավ է ընդունել ու սիրել: Մայրը հիշում է մի դեպք, երբ մյուս հարսի երեխան մոր կուրծքը չէր ընդունում, ինքն էր կերակրում նրան, իսկ տատը բարկացած ասել է. «Այս սպիտակ բըլբուլ կուրծքը չի ուտում, սև կուրծքն է ուտում»: Չնայած այս ամենին՝ մայրն անխռով աշխատել է. մինչև հիմա տան օղին ինքն է քաշում և իր իմացած ավանդույթներն ու ճաշատեսակները փոխանցում նրանց, ովքեր հետաքրքրվում են:

Քարահունջի երիտասարդներից մեկն ասում է, որ իրենց տունը մինչ օրս կոչվում է

իր տատիկի անունով՝ «Նուբարի տուն»: Իր պապիկը՝ Սուրենը, մահացել է շատ վաղ՝ մենակ թողնելով Նուբարին չորս երեխաների հետ: Սակայն Նուբարը հաղթահարել է այդ ամենը՝ հիմքից կառուցելով իր տունը: Նա, միայնակ պահելով ընտանիքը, բոլորին ուսման էր տվել: Թոռը հիշում է, որ երբ ինքը սովորում էր, տատիկն իրեն գաղտնի գումար էր տալիս՝ ուրախացնելով նրան: Հարևաններն էլ հաստատում են, որ Նուբարը բարի ու նամուսով կին էր՝ արժանի հարգանքի:

Քարահունջեցիները հիշում են Վարդուհի անունով մի կնոջ, որը, ինչպես պատմում են, եղել է դաշնակցական, առաջադեմ և կռվող կին: Սակայն նա սպանվել է Սոսե անունով մեկի կողմից՝ անառակության և դաշնակցական լինելու մեղադրանքով (գյուղում անառակ կին չպիտի լիներ):

Մյուս պատմությունները նշում են, որ Վարդուհին բոլշևիկներին հաց էր տանում և նյութեր փոխանցում նրանց: Երբ դաշնակները դա իմանում են, պատժում են նրան՝ էշի հետևից կապելով և գյուղում պտտեցնելով: Վարդուհուն մահամերձ վիճակում գցել են գյուղի ներքևի կամրջի մոտ: Դաշնակները նրան անբարոյականի անվան տակ սպանել են և թաղել գոմաղբի մեջ:

Վերջում մեկ այլ գյուղացի նշում է, որ Վարդուհին ամուսնացած էր և մի երեխա ուներ:

Վերիշեն

Հաջորդ հարցազրույցը անցկացվել է Վերիշեն գյուղում: **Գագիկ Հայրումյանը** նշում է, որ եղել են դեպքեր, երբ երիտասարդ ամուսինը մահացել է, և նրա այրուն ամուսնացրել են ամուսնու եղբոր հետ՝ ընտանիքը միասնական պահելու և երեխաներին որբ չթողնելու համար: Այս պրակտիկան, որը հայտնի է որպես լևիրատ ամուսնություն, ցույց է տալիս համայնքի շեշտադրումը ընտանիքի շարունակականության և աջակցության վրա:

Գագիկն ընդգծում է համայնքում կանանց ընկալման երկակիությունը. կինը ընտանիքի հույսն է, կինն ամուսին է, ըստ որում, կան շատ բարի, հոգատար, ինչպես նաև դաժան և կոպիտ կանայք: Սա արտացոլում է համայնքի ներսում կանանց մարմնավորած տարբեր դերերն ու առանձնահատկությունները:

Ըվ **Գագիկը**, և՛ **Նինան** պատմում են աշխատավոր կանանց մասին, ովքեր գյուղատնտեսության մեջ կատարում են կարևոր աշխատանքներ, ինչպիսիք են ցորենի հավաքումը և կալսումը: Սա ընդգծում է այն էական դերը, որ կանայք խաղացել են համայնքի գյուղատնտեսության արտադրողականության և պահպանման գործում:

Նինան քննարկում է այն իրողությունը, երբ կանայք ամուսնանալուց հետո վերցնում են իրենց ամուսնու ազգանունը: Սա արտացոլում է ավանդական ակնկալիքը, որ կանայք լիովին ինտեգրվեն իրենց ամուսնու ընտանիքին: Նինան նշում է, որ մայրական իշխանությունը նշանակալի է համայնքում, սակայն գերակշռում է հայրական ազդեցությանը:

Գյուղում կան պատմություններ այն կանանց մասին, որոնք ազգամիջյան ընդհարումների զոհ են դարձել, օրինակ՝

թուրքերը մի կնոջ տանջամահ են արել անդամահատելով:

Սահդան նշում է, որ մեր օրերում կանանց իրավունքները սահմանափակված չեն: Նա բացատրում է, որ իր ընտանիքում պարտականությունները հավասարապես բաշխվում են՝ ի տարբերություն անցյալի, երբ կանայք կրում էին տնային հոգսերի հիմնական մասը: Նա նկարագրում է իր՝ ռոմանտիկ սիրուց զուրկ ամուսնությունը, որը, սակայն, աստիճանաբար վերածվում է փոխադարձ հարգանքի և սիրո: Ամուսինը ակտիվ դեր է խաղացել երեխաների խնամքի և տնային գործերում, ինչը նա շատ է գնահատում:

Սահդան պատմում է 1993 թվականի հակամարտության ժամանակ Մարտակերտից տեղահանված ընտանիքի հյուրընկալության պատմությունը: Կարիքները կիսելու և ապաստան տալու նրա պատրաստակամությունը արտացոլում է համայնքի ամուր կապերը և պատասխանատվության զգացումը մյուսների հանդեպ: Նա դրական է վերաբերվում տեխնոլոգիական առաջընթացին, հատկապես կապի տեխնոլոգիաներին, ինչպիսիք են հեռախոսներն ու համակարգիչները, որոնք օգնում են նրան կապ պահպանել իր երեխաների և աշխարհի հետ:

Ըվ **Զաբելան**, և՛ **Մարգուշան** նշեցին, որ Վերիշենի կանայք մեծապես ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում, ինչպիսիք են ծխախոտի մշակությունը, հերկը, բերքահավաքը և անասնապահությունը: Կանայք պատասխանատու են կենցաղային բոլոր աշխատանքների համար, այդ թվում՝ հեռավոր աղբյուրներից ջուր բերելու, ձեռքով հագուստը լվանալու և մաքրությունը պահպանելու:

Զաբելան նկարագրում է, թե ինչպես էին իրենց ժամանակ ամուսնությունները կազմակերպվում առանց հարսնացուի համաձայնության կամ հավանության՝ ընդգծելով այդ որոշումներում ինքնուրույնության բացակայությունը: Երկու կանայք կիսվել են լռություն պահպանելու և իրենց սկեսրայրի ու սկեսուրի նկատմամբ հարգանք դրսևորելու փորձով: Այս կանայք անգամ լվացել են իրենց սկեսրայրերի ոտքերը:

Կանանցից մեկը մատնանշեց, որ ժամանակակից սերունդները չեն ցուցաբերում նույն հարգանքը մեծերի նկատմամբ, ինչպես ընդունված էր անցյալում: Նա նշեց, որ իր ծնողները խիստ էին իրենց հանդեպ, և նույնիսկ եթե տանը հյուր էր լինում, իրենք ամաչում էին սեղանի մոտ նստել: Հիշում է, որ մայրիկ անվանել են իրենց տատիկին, իսկ մորը կոչել են անունով, որովհետև իր տատիկը արգելել է՝ ասելով. «Դա ինչ մամա է, մաման ես եմ»:

Նա ցավով պատմում է, որ ծնողները երազում էին աղջիկներին վաղ ամուսնացնել,.երբ հարևան աղջիկներից մեկն ամուսնանում էր, հայրը դժգոհությամբ ասում էր. «Հենե՛, էդ աղջիկն էլ պսակվեց, դուք մնացիք տանը»: Տատիկներից մեկը հիշում է, որ Աղաբեկ անունով մեկի ծնվելուն պես մայրը մահացել է, ու որբուկին կերակրել է իր հորեղբոր կինը: Հետո Աղաբեկի հայրը ամուսնանում է, որպեսզի երեխաներին պահող լինի: Խորթ մայրը Աղաբեկին վերաբերվել է այնպես, ինչպես իր հարազատ երեխաներին:

Ինչ վերաբերում է անբարո կանանց, պատմեցին, որ նրանց նստեցրել են

ավանակի վրա և եղինջով ծեծելով՝ ման տվել ամբողջ գյուղում. դա եղել է նրանց պատիժը:

Խնձորեակ

Արաքսյան պատմեց իր կյանքի պատմությունը՝ սկսած հին Խնձորեակում ծնվելուց և յոթ տարեկանում նոր Խնձորեակ տեղափոխվելուց: Նա ամուսնացել էր տասնյոթ տարեկանում և հավասարակշռել էր կենսաբանության ուսուցչի իր կարիերան կնոջ և մոր դերով: Նրա նվիրվածությունը կրթությանը և ընտանիքին վկայում է այն կարևոր դերի մասին, որ կանայք խաղում են իրենց համայնքներում: Նրանք մասնակցություն են ունենում տանը որոշումների կայացման գործընթացին: Արաքսյան իր ընտանեկան կյանքը բնութագրեց որպես հարգալից և հավասարակշռված, առանց ընտանեկան բռնության որևէ ձևի: Նա ընդգծեց փոխադարձ հարգանքը և ժողովրդավարական արժեքները ընտանիքում:

Ավդան արձագանքեց նմանատիպ տրամադրություններին՝ ընդգծելով ընտանիքի և համայնքի կարևորությունը: Երկու կանայք էլ ներկայացրին, թե ինչպես են բաժանվում կենցաղային պարտականությունները, որտեղ կանայք ստանձնում են տնային աշխատանքի զգալի մասը:

Այստեղ պատմեցին տարբեր մշակութային սովորույթների մասին, ինչպիսիք են ավանդական խոհարարությունը և Մայիսի 1-ի տոնակատարությունը, երբ բոլոր գյուղացիները հավաքվում են հին գյուղում: Այնուամենայնիվ, որոշ սովորույթներ, ինչպիսիք են ավանդական ուտեստների պատրաստումը և անձրևի համար ընդհանուր ծեսերը, մարում են ժամանակակից ազդեցությունների և ապրելակերպի փոփոխության պատճառով:

Երկու կանայք էլ նկատել են ավանդական դերերի նկատմամբ համայնքի վերաբերմունքի փոփոխությունը: Երիտասարդ սերունդն ավելի քիչ է հակված հետևելու հին սովորույթներին և ավելի շատ կապված է ժամանակակից տեխնոլոգիաների և քաղաքային ապրելակերպի հետ: Չնայած դրան՝ հարգանքը մեծերի և ընտանեկան ավանդույթների նկատմամբ մնում է ամուր: Ըստ նրանց՝ կրթության և մասնագիտական ոլորտներում կանանց հնարավորությունները մեծացել են:

Տղամարդիկ նշեցին, որ գյուղի ներքևի մասում կա Աղջկա բերդ, որը ենթադրաբար կառուցվել է մի կնոջ կողմից՝ պաշտպանվելու նպատակով: Բերդն ունի գաղտնի անցում, որը տանում է դեպի բարձր քարայր, ինչը ցույց է տալիս նրա պաշտպանական նպատակը:

Ասացին, որ եղել են դեպքեր, երբ երեխաներին տվել են մայրական կողմի ազգանունը: Օրինակ՝ Արամ Ապրունց անունով անձը տատիկի ազգանունով է կոչվել:

> Տղամարդիկ ընդունեցին, որ կանայք զգալիորեն ներգրավված են ընտանեկան որոշումների կայացման գործընթացում:

Յուրիկ Թունյանը պատմում է, որ մայիսյան ապստամբության ժամանակ դաշնակ-բոլշևիկ հակամարտության արդյունքում գյուղում զոհ է դառնում երեք

հոգի, որոնց թվում էր Սոնա Թաթարյանը: Խոսեցին նաև Օլիկանի մասին, ով հարգված տրակտորիստ էր Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, իսկ նրա ամուսինը կռվել է պատերազմում:

Գառնիկը նշում է, որ իր կինը ամուսնությունից հետո վերցրել է իր ազգանունը՝ հավատարիմ մնալով ավանդական նորմերին: Նա շեշտում է կանանց հարգելու կարևորությունը՝ ավելացնելով, որ պետք է զգույշ լինել, որովհետև մեկ էլ տեսար կինը թռավ-գնաց: Այս տեսարանը ցույց է տալիս նահապետական կառույց, որտեղ տղամարդիկ ունեն իշխանություն, բայց նաև պարտավոր են իրենց կանանց խնամքով վերաբերվել:



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՆՐԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Հրուշտավարներ՝ Բալասանյան Լիլիթ, Մինասյան Նարինե, Մկրտչյան Անի

Այս տեքստը ներկայացնում է մի մարդու կենսագրություն, որը պատմում է իր ծննդի, կրթության և կարիերայի մասին խորհրդային ժամանակաշրջանում։ **Պատմությունը՝ առանց բովանդակային խմբագրության**

Բանասաց-պատմող՝ Ս. Վարդանյան՝ ծնված 1946 թվին Տանձատափ գ., բնակվում է Գորիսում

Որտեղ եք ծնվել, ինչ կրթություն եք ստացել և ինչ գործունեություն եք ծավալել խորհրդային ժամանակաշրջանում։

Ես ծնվել եմ Գորիսի շրջանի Տանձատափ գյուղում, որտեղ նաև մեծացել եմ։ Դպրոցն ավարտել եմ Տաթևում, քանի որ Տանձատափում այն ժամանակ յոթնամյա դպրոց էր։ Ավարտելուց հետո չորս տարի սովորել եմ Տաթևում։ Առաջին անգամ գյուղական դպրոցներում 11-րդ դասարանի ծրագիրն էր մտցված, և մենք միակ շրջանավարտը էինք այդ դասարանում։ Դրանից հետո շարունակել եմ ուսումը Երևանում՝ ստանալով գյուղատնտեսական կրթություն։ Ավարտելուց հետո վերադարձել եմ Գորիս. պարտադիր էր երեք տարվա աշխատանք կատարել պետության կողմից նշանակված ծրագրով։

Մոտ երեք-չորս ամիս աշխատելուց հետո զորակոչվել եմ բանակ՝ ծառայելով սովետական օդադեսանտային ուժերում մեկ տարի (բարձրագույն կրթություն ստացողները մեկ տարի ծառայել են բանակում), և զորացրվելուց հետո վերադարձել եմ Գորիս։

Աշխատանք որոնելու ընթացքում ինձ զանգահարեցին կուսակցության շրջանային կոմիտեից՝ հրավիրելով ներկայանալու։ Առաջարկեցին կոմերիտմիության շրջանային կոմիտեում հրահանգիչ աշխատել, քանի որ այդ պաշտոնի համար պահանջվում էին գյուղի մասնագետներ։ Ես համաձայնեցի, և սկսվեց իմ աշխատանքը այդ բնագավառում։

Երեք տարի աշխատելուց հետո կոմերիտմիության շրջկոմում, դարձա բաժնի վարիչ, իսկ 1974 թվականի փետրվարին նշանակվեցի հրահանգիչ կուսակցության շրջկոմում։ Դրան զուգահեռ ավարտեցի Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը հեռակա կարգով։ 1979 թվականին նշանակվեցի կազմակերպական բաժնի վարիչ, ինչը բավական բարձր պաշտոն էր այդ ժամանակ։

1972 թվականին տեղի ունեցավ առաջին քարտուղարի փոփոխություն, և հենց հունվարի վերջին ինձ ընտրեցին շրջկոմի քարտուղար, որն այդ ժամանակ կոչվում էր երրորդ քարտուղար։ Մի տարի աշխատելուց հետո նշանակվեցի երկրորդ քարտուղար։ 1983 թվականի վերջում աշխատել եմ մինչև 1990 թվականը։

1988 թվականին սկսվեց Ղարաբաղյան շարժումը, և 1990 թվականին քաղաքական

իրադարձությունները խորացան: Ես գիտակցում էի, որ կուսակցության ապագան անորոշ է, բայց ամոթ էր հեռանալ: Եվ հասկացա, որ պետք է մնամ մինչև իրադարձությունների պարզվելը: Շրջկոմի առաջին քարտուղարը հեռացավ, և ինձ ընտրեցին առաջին քարտուղար. այդ պաշտոնում մնացի մեկ տարի: 1991 թվականին կուսակցությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Դրանից հետո աշխատել եմ իրավախորհրդատու տարբեր կազմակերպություններում, բանկերում: 1994 թվականին ընդունվեցի դատախազություն որպես դատախազի օգնական, ապա՝ շրջանային դատախազի օգնական: Աշխատել եմ մինչև 1999 թվականը, երբ դատախազությունում կատարվեցին ռեֆորմներ, և ինձ նշանակեցին մարզի դատախազի տեղակալ՝ սպասարկելու Գորիսի տարածաշրջանը: Աշխատեցի մինչև 2007 թվականը, այնուհետև անցա կենսաթոշակի:

Ինչ գործունեություն եք ծավալում ներկա պահին:

Ինձ հիմա հետաքրքրում է մեր հասարակական կյանքը, անցուդարձը: Կարդում եմ, որոշ գրառումներ եմ անում իմ ապրած կյանքի մասին այն ժամանակներից և որոշ բաներ՝ այսօրվանից: Փոքր աշխատանքներ եմ տպագրում: Ես չեմ ասում, թե ես գրող եմ, ես հեռու եմ այդ բաներից: Ինձ համար գրողը մեծ անձնավորություն է՝ լայն ընդգրկումներով, մտահորիզոնն անսահմանափակ է, և յուրաքանչյուր նախադասություն գրող չպետք է իրեն գրող համարի: Գրողներն առանձնահատուկ անձինք են՝ հատուկ ընտրված, հատուկ ծնված: Ես մեր երիտասարդներին ասում եմ, որ մեր բարբառը ուսումնասիրելու համար պետք է լավ կարդան Բակունցի պատմվածքները, թեկուզ մի փոքր պատմվածք՝ գյուղերի և գյուղական կյանքի մասին:

Դուք ո՞ր ժամանակաշրջանում եք լավ ապրել՝ խորհրդային, թե՞ ներկա ժամանակաշրջանում:

Ես խորհրդային ժամանակներում ապրել եմ մինչև 1990 թվականը: Այդ ժամանակ ես 44 տարեկան էի, այժմ 78 տարեկան եմ: Այն ժամանակ իմ երեխաները դպրոցականներ էին, ունեմ երեք երեխա: Ես պաշտոնական դիրքում էի, իսկ հիմա ունեմ թոռներ, այն ժամանակ չունեի: Այժմ իմ երեխաները մեծացել են, նրանք իրենց երեխաներին ունեն, ովքեր արդեն համալսարանականներ են:

Լավ ապրելը, իհարկե, չի նշանակում, որ տանը շատ ուտելիք կամ գումար ունես: Ես և այն ժամանակ եմ լավ ապրել, և հիմա: Ինչո՞ւ եմ լավ ապրել: Ունեցել եմ աշխատանք, կատարել եմ իմ պարտականությունները բարեխղճորեն, և իմ աշխատանքը գնահատվել է հասարակության կողմից: Երբեք չեմ չարաշահել իմ պաշտոնը, գուցե որոշ թերացումներ ունեցել եմ, չեմ ասում, թե անթերի եմ եղել, որովհետև դա հնարավոր չէ:

Հիմա լավ եմ ապրում, որովհետև իմ երեխաները կայացել են: Ճիշտ է, երկրի վիճակը բարդացել է, դժվար է, բայց ես լավ եմ ապրում այն առումով, որ իմ աշխատանքը ինչ-որ տեղ արդյունավետ է եղել: Իմ երեխաները խելացի են, ընտանիքս խաղաղ է, չեն լինում կռիվներ: Մեր ուժերի

սահմաններում աշխատում ենք և ստեղծածով բարին վայելում: Ունեմ ընկերներ, և կարծում եմ, որ լավ ապրելը դա է:

Հաշվի առնելով նախկին ժամանակները՝ պետք է նշել, որ լավ արժեքները շատ էին, սակայն նաև բացասական կողմեր կային: Այդ ժամանակ կային հասարակության կողմից ընդունված կանոններ, կաղապարներ, որոնցից դուրս գալն անթույլատրելի էր: Դրականն ու կարևորն այն էր, որ մարդիկ իրար նկատմամբ հարգանք ունեին, ներողամիտ էին, հանդուրժող, զուսպ:

Երբ ասում ենք, որ ազատ ենք, դա չի ենթադրում ամենաթողություն: Մենք ժողովրդավար ենք, բայց հակառակն ենք անում: Անձի իրավունքները այդ ժամանակ լիովին ապահովված էին, և անվտանգության մակարդակը բարձր էր: Ջեմ ասում, թե հանցագործություններ չկային, բայց դրանք քիչ էին՝ համեմատած այսօրվա հետ:

Եթե անձը տեղափոխվում էր բնակության վայրից, ավելի արտոնյալ էր. կարող էր բողոքել, եթե իրեն նեղացնեին, և նրա բողոքը ընդունվում էր իշխանության կողմից: Հանդուրժողականությունը, հարգանքը և ուշադրությունը իրար նկատմամբ այդ ժամանակ շատ կարևոր էին:

Այսօր իմ թոռները երեք լեզու են ուսումնասիրում: Նրանք ոչ միայն հասկանում, այլև խորությամբ ուսումնասիրում են դրանք: Այսօր կա նաև արտերկրի հետ շփվելու հնարավորություն, ինչը շատ լավ է, որովհետև նախկինում երկաթյա վարագույրը գործում էր, և միայն հատուկ մարդկանց էր թույլատրվում արտասահման գնալ:

Ավելացնեմ, որ խորհրդային տարիներին ես նաև հանձնաժողովի ղեկավարն էի արտասահման մեկնողների համար, որտեղ մարդկանց՝ սահմանից դուրս գալը սահմանափակվում էր խորհրդային երկրների ցուցակով: Կարծում եմ՝ այսօր կրթության որակը շատ ցածր է: Խորհրդային դպրոցում ստանում էին բազմակողմանի կրթություն, որն անհրաժեշտ էր կյանքում:

Դպրոցից ստացած գիտելիքները՝ մասնավորապես մեքենագիտության ոլորտում, շատ օգտակար էին, օրինակ՝ վթարների քննությունների ժամանակ այդ գիտելիքներն ինձ բավական էին, որ հասկանամ գործի ամբողջ խորությունը: Ամեն բնագավառում սովորեցնում էին ամեն ինչ, գուցե ամեն ինչից մի փոքր, բայց դա կար:

Ինչպիսին է եղել մտածելակերպը խորհրդային ժամանակաշրջանում և խորհրդային ժամանակաշրջանից հետո:

Խորհրդային ժամանակներում մարդն ուներ մտածելակերպ, որը համապատասխանում էր այդ ժամանակվա բարքերին: Իհարկե, անհատները, մեծ մտածողները, իրենց մտքի թռիչքն ունեին: Հիմա մարդն ապրում է ըստ նոր պայմանների և դրսևորում է համապատասխան մտածելակերպ: Այն տարբերվում է նախկինից: Խորհրդային շրջանում եթե մարդը չէր աշխատում, նրան դատում էին՝ ասելով՝ ինչպե՞ս ես ապրում, իսկ հիմա ասում են՝ եթե ուզում ես, աշխատիր, չես ուզում՝ մի՛ աշխատիր: Եթե չես աշխատում, չես ունենալու ոչ սնունդ, ոչ կյանք: Սա էլ իր հերթին սխալ չէ. չէ՞ որ պետք է աշխատել, թե չէ ո՞վ պետք է աշխատի, որ դու ապրես: Խորհրդային շրջանում թերևս վատ էր այն, որ

ակադեմիկոսներին և մեծ հաջողությունների հասած մարդկանց հավասարեցնում էին մյուսների հետ: Ասում էին՝ ինչո՞ւ է նա այսքան ստանում, իսկ մյուսը՝ այդքան: Մտածելակերպը տարբեր էր.այնտեղ՝ մի ձև, այստեղ՝ այլ ձև: Այն ժամանակ էլ կային խնամի-ծանոթ հարաբերությունները, հիմա էլ կան: Տարբերությունն այն է, որ այն ժամանակ գոնե գործին տիրապետում էին, իսկ հիմա իմանաս թե չիմանաս՝ խնամիդ է քեզ աշխատանք տալիս: Այս խայտառակությունը մինչև այսօր էլ կա:

Ինչպիսին է եղել եկեղեցու դերը խորհրդային ժամանակաշրջանում:

Խորհրդային ժամանակ եկեղեցին չկար: Ժողովրդին հեռացրել էին եկեղեցուց, և դա արել էին պիղծ ձևով: Եկեղեցին մեկնաբանում էին որպես կեղեքող և վնասող ինստիտուտ: Սակայն եկեղեցին ժողովրդի հոգեբանության, բարոյականության և դաստիարակության մեջ կարևոր ինստիտուտ էր և մնում է այդպիսին ոչ միայն մեզ մոտ, այլև ամբողջ աշխարհում:

Առաջին անգամ հոգևորական տեսել էի Երևանում՝ իր սքեմով, և դա զարմանալի էր, որովհետև այն ժամանակ հոգևորականները հազվադեպ էին երևում ժողովրդի մեջ: 1986 թվականին մեր դասախոսներից մեկի հայրը մահացել էր: Մենք՝ ուսանողներս, գնացինք թաղման արարողությանը, որը եկեղեցում էր: Դա շատ զարմանալի էր այդ ժամանակների համար: Հանգուցյալը ցանկություն էր հայտնել, որ իրեն անպայման եկեղեցում թաղեն: Արարողությունը կատարեց հոգևորականը: Երբ քելեխի ժամանակ նստեցինք, մեր առջևի սեղանին նստած էր հոգևորականը՝ սքեմը փաթաթած ձեռքի տակ: Մի ձեռքով հաց էր ուտում, մյուս ձեռքով սքեմն էր բռնած: Կողքին նստած մարդն ասաց՝ «Տեր Հայր, դիր մի կողմ ու հանգիստ հաց կեր»: Նա պատասխանեց. «Ինչ ես խոսում, զինվորից զենքը վերցնես՝ նա դեռ զինվոր է»:

Այսօր եկեղեցին վատ բան չէ, այն անհրաժեշտ է, մեր պատմության ու մշակույթի կարևոր մասն է: Անհավատ մարդիկ չկան. ես բնապաշտ եմ, բնությանն եմ հավատում և հավատում եմ վերին ուժին, որը կառավարում է ամեն ինչ: Ես հիմա մի աշխատանք եմ պատրաստում, որի մի հատվածը նվիրել եմ հենց այդ վերին ուժին՝ «Տիեզերք է մարդը տիեզերքում»: Այն, ինչ կատարվում է մարդու ներսում, կատարվում է տիեզերքում, որովհետև մարդը տիեզերքից է ածանցված: Այս վերնագրով եմ պատրաստել իմ աշխատանքը:

Անհատի մեջ մեծ հզորություն կա՝ անսահմանություն: Մտքի ազատությունը և մարդու զարգացումը նույնպես անսահման են, ինչպես տիեզերքը: Մարդու երևակայությունը և հզորությունը անչափելի են: Մարդը երկրագնդի վրա ունի հատուկ առաքելություն: Ժամանակի ընթացքում նրա պայքարի ձևերը կփոխվեն, իսկ հնարավորությունները կմեծանան: Մի խոսքով, անսահմանություն է, և մարդն էլ այդ անսահմանության մասն է:

Բնության մեջ տեղի ունեցող երևույթները համեմատվում են մարդու բնույթի ու բնավորության հետ: Զայրացած մարդը կայծակ ու որոտ է, իսկ հանգիստ խոսողը՝ այգին ջրող անձրև: Քարքարափը նայիր և կտեսնես, որ շատ մարդիկ նման են քարափներին: Օրինակ՝ մեր սպորտային հերոսները կամ ծերունին, որ դժվարությամբ դուրս է գալիս տնից, նստում քարին, ձեռնափայտը հենում կզակին և մտորում:

Նայիր քարափներին ու կտեսնես, թե որքան նմանություններ կան նրանց միջև:

Բնաշխարհի պաշտամունքը նաև երկրագնդի և տիեզերքի պաշտամունքն է: Ես բնապաշտ եմ, և դրանից բարձր բան չկա: Բուդդայականության մեջ բնապաշտությունը հիմնարար է և անփոխարինելի: Կոմունիստները խաբում էին ժողովրդին՝ ներկայացնելով, թե դա ճիշտ չէ: Ժողովուրդը հիմնականում անգրագետ էր, և միայն մի փոքր մասն էր կրթություն ստացել ու հասկանում իրավիճակը: Նրանց էլ հեռացրել էին և քանդել էին վանքերն ու մատուռները: Սա է մեր դժբախտության պատճառը:

Դժբախտության պատճառը, սակայն, նաև անգործությունն է:

Ինչ սովորություններ կային այն ժամանակ:

Գյուղում խաղերը բոլոր տեղերում նույնն էին, նույն խաղերը կրկնվում էին: Երաշտի և անձրևային եղանակների հետ կապված տարբեր սովորություններ կային: Մեր գյուղը կավագործների գյուղ էր: Երբ երկարատև անձրևներ էին լինում, և երբ ցեխանում էր, պատկերացրեք՝ խյուսը մինչև ծնկները հասնում էր, և անցնելու տեղ չէր լինում: Պաշտամունքային մի քար ունեինք, որին «Մարիի քար» էինք ասում: Գնում էինք Մարիի քար, աղջիկները քարից կրակ էին վառում ու երգում. «Մարի՛, Մարի՛, մենք քե՛զ չորացնենք, դու մե՛զ չորացրու»:

Մեր գյուղում լավ սովորություն կար: Նախ՝ գյուղում ես չեմ տեսել փակ դուռ, բայց այն ժամանակ ամոթ էր, եթե ինչ-որ մեկի տնից բան տաներին: Մի լավ սովորույթ էլ կար գյուղում. ձմռանը գյուղում աշխատանք չկար, միայն անասունների խնամքն էր: Երեկոները երկար ճանապարհ էինք անցնում, հավաքվում էինք հարևաններով իրար տներում: Մեր տան շրջապատում հինգ ընտանիք կար, որոնց հետ անպայման շփվում էինք: Երեկոները մենք մորս հետ գնում էինք հարևանի տուն, և այդպես ամեն օր մեկի տանն էինք հավաքվում: Սեղանին դրված էր ընկույզ, չիր: Նստում էին, զրուցում, երեխաները խաղում էին: Մեծերը պատմություններ էին պատմում: Գյուղում հեռուստացույց չկար, ռադիոն էլ հազիվ էր հասել գյուղ: Երբ 1964 թվականին գնացել էի Երևան, այնտեղ առաջին անգամ տեսա:

Շատ բան է փոխվել: Այն ժամանակ կոլեկտիվ մտածողություն և գործողություն կար, և դրանից դուրս որևէ բան անելը անթույլատրելի էր: Սա հիմնականում բարոյական նորմերով էր կարգավորվում, ոչ թե հարկադրաբար կամ ուժով, այլ բարոյականության միջոցով: Ասում էին՝ «վաղը մյուս օրը կոլեկտիվը իմանա՝ ինչ կմտածի», բայց հիմա կոլեկտիվ չկա, յուրաքանչյուրը ասում է՝ «ես եմ»: «Ես այսպես եմ ուզում, այսպես եմ անում», բայց յուրաքանչյուր «ես»-ի արածը չէ, որ ընդունելի է: Համակարգային փոփոխություններ պետք է լինեն, երկրում կարգը հաստատվի դրականի շուրջ, բայց դրան ուշադրություն չեն դարձնում: Մենք տեսնում ենք, թե բարձր ատյաններում ինչպիսի գռեհկություն, ծաղր, անթույլատրելի բառապաշար է օգտագործվում, և շատ երևույթներ «հենց այնպես չեն անցնում»:

Ինչպե՞ս եք ծանոթացել ձեր կնոջ հետ:

Ես կնոջս հետ ծանոթացել եմ, երբ կոմերիտմիության շրջկոմում էի աշխատում: Արդեն մի տարի աշխատում էի: Քաղաքապետարանի մշակույթի բաժնում մի քանի կոմերիտականներ կային, և պետք էր

կազմակերպություն ստեղծել: Գնացի, որպեսզի քարտուղար ընտրենք, որ այդ կազմակերպությունը կայանա: Հավաքվեցինք, զրուցեցինք, եկա շրջկոմ, և մեր սեկտորի վարիչն ասաց, որ այնտեղ կարելի է Սիլվա Ասատրյանին ընտրել, քանի որ նա ակտիվիստ է եղել դպրոցում, լավ է սովորել, մեդալով է ավարտել: Ասաց, որ կարելի է նրան ընտրել: Ասացի՝ հա, բայց ինձ այնքան էլ դուր չէր եկել. կարծես մի քիչ վերևից էր նայում շրջապատին: Սակայն, նրան քարտուղար ընտրեցինք, շփվեցինք, հետո որոշեցինք մեր բախտը կապել իրար հետ: Ես չեմ փոշմանել:

Ինչպիսին է երեխայի դաստիարակությունը ընտանիքում:

Ես դեմ չեմ, որ երեխաներին իրավունք են տալիս և ասում են՝ «բողոքելու իրավունք ունես», բայց չպետք է դա վերածել գռեհկության: Այդպես չէ, երեխան դաստիարակության կարիք ունի: Մանկատները, մանկապարտեզները, դպրոցները ինչի՞ համար են ստեղծվել: Որպեսզի մարդը դաստիարակվի, ձևավորվի: Երեխան չձևավորված անձնավորություն է, և նրա մտքով ինչ ասես կանցնի, հատկապես անցումային տարիքում: Ինքը սահմաններ չունի: Ծնողների 99%-ը բարի բան է ասում իր երեխային, չարը բան չի սերմանում: Իսկ ովքեր էլ չար բան են ասում, նրանք նորմալ մարդիկ չեն: Ես այսպես եմ պատկերացնում:

Ինչ խորհուրդ կտաք նոր սերնդին:

Իմ խորհուրդը ներկա սերնդին՝ որ խոհեմ լինեն: Պետք է իմանան, որ կյանքը հեշտ բան չէ: Կյանքը գեղեցկանում է աշխատանքով, գիտելիքով: Շատ բան սովորեն, հանդուրժող լինեն, ներող լինեն: Ներելը մեծ բան է: Հզոր մարդիկ, խելոք մարդիկ միշտ ներող են, իսկ հող տանողները թույլերն են: Չի կարող խելոք, բանիմաց մարդը խելքը դնել հիմարի խելքին: Խելացի մարդը կթողնի, կհեռանա կամ շրջանցելու ելք կգտնի: Եթե անհաղթահարելի պատի հանդիպեք, ոչինչ, շրջվե՛ք և գնացե՛ք այլ ուղիով: Պարտադիր չէ գնալ ու ջարդել պատը:







Ո՞Վ Է ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

Սուրեն Վարդանյան

«Հայ ազգը պետք ունի թե՛ զենքով կռվող հերոսների և թե՛ մանավանդ մտավոր ազնվական դասի»

Կ. ՋԱՐՅԱՆ

Հազարավոր տարիների իր պատմության ընթացքում մեր ազգը բազմիցս է ապացուցել, որ զենքով կռվող փայլուն հերոսներ ունի: Այլ բան է, թե ինչպես ենք օգտվել այդ հզոր ուժից: Երբ տեղին ու ժամանակին ենք խթանել այն ու կիրառել, հաղթանակը չի ուշացել: Մեր պատմական ճանապարհին այդպիսի փաստերը բազմաթիվ են: Վերջին օրինակը 1990-ականների Արցախյան գոյամարտն էր, որտեղ սխրանքի փայլուն էջեր գրելով՝ Հայ Հերոսը կերտեց պատմական հաղթանակը:

Քանի որ մեր քննարկման նյութը սա չէ, բավարարվենք այսքանով և փորձենք պարզել, թե ով է մեր «ազնիվ մտավորականը», ինչ տեղ ու դեր պետք է ունենա երկրի-պետության կյանքում, և որտեղ է հիմա նա: Մեծ գրողն ու մտածողը հատուկ ընդգծել է ազգի համար «մանավանդ մտավոր ազնվական դաս»-ի կարևորությունը, այսինքն՝ նրան դնում է անգամ «զենքով կռվող հերոսներ»-ից առաջ:

Նախ պարզենք՝ ով է մտավորականը: Վիքիբառարանը բացատրում է. մտավորականը «մտավոր աշխատանքով զբաղվող, գիտության, տեխնիկայի և մշակույթի բնագավառներից մեկի անհրաժեշտ գիտելիքներ և կրթություն ունեցող մարդն է»:

Ընդհանուր առմամբ համաձայնելով այս բացատրությանը՝ պետք է ասել, որ, ըստ ինձ, այն ոչ միայն լիարժեք չի արտահայտում մտավորական հասկացության բովանդակությունը, այլ նաև զգալիորեն նեղացնում, նույնիսկ



սահմանափակում է այն: Երկրի, պետության դիմագծի, նրա գործունեության տիրույթում մտավորականը շատ ու շատ ավելին է, քան զուտ մտավոր մասնագիտական աշխատանքով զբաղվողը: Հասարակության մեջ այդպիսիք կազմում են առանձին դաս: Իր մասնագիտական գործունեությունից զատ կարևորագույն դեր ունի տվյալ երկրի ու պետության կյանքում: Նա պետք է առաջնորդի այդ

հասարակությանը, նրանում գործունեություն իրականացնող քաղաքական-հասարակական կազմակերպություններին, ձևավորած իշխանություններին, ինչքան էլ վերջիններս չցանկանան դա՝ խոչընդոտներ ստեղծելով նրա համար: Ցանկացած երկրի համար նշվածը կենսական է, հատկապես ժողովրդականացման ուղին բռնածների, որտեղ այս չափանիշը խախտվեց, այնտեղ ոչ միայն խստորեն կտուժի ժողովրդավարությունը, այլև կսահմանափակվեն ազատ խոսքն ու մարդու իրավունքները, երկրի զարգացման հեռանկարը կդառնա խիստ աղոտ, խմբային-կուսակցական շահը՝ իշխող: Սա լավ բան խոստանալ չի կարող: Իրականության մեջ եթե թելադրողը մտավորականությունը չէ, այլ իշխանությունն է, ապա բանը կարող է հասնել նույնիսկ ավտորատիզմին, մի բան էլ այն կողմ անցնել: Իրական մտավորականը երկրի ամենաազատ, ամենաանկախ, հարուստ գիտելիքներով խիզախ անձն է: Այս տեսակետից մտավորականների դասը թվով մեծաքանակ չի կարող լինել, բայց տեսակարար կշռով հզոր է: Նա որևէ կուսակցության ֆանատիկորեն չի զինվորագրվում, որևէ քաղաքական կամ այլևայլ հոսանքի գերին չի դառնում, նրա մասնավոր շահը չի սպասարկում: Անդամատոմս ունենալը ոչինչ չի նշանակում, անգամ երկրորդական, երրորդական էլ չէ նրա համար, ավելի հետին պլաններում է: Օրինակներ ինչքան ուզեք կան՝ Հ. Թումանյան, Ա. Իսահակյան՝ դաշնակ, Վիկտոր Համբարձումյան՝ կոմունիստ…: Մտավորականի համար կուսակցականությունը անչափ քիչ բան է նշանակում, երկրի ու ժողովրդի շահն է նրանց դավանանքը: Հ. Թումանյանն իր ստեղծագործությամբ և ամբողջ առօրյայով ծառայում էր ազգին՝ ընտանյոք հանդերձ լծվելով հազարավոր որբերի և հայրենիքի փրկության սուրբ գործին, Ա. Իսահակյանը՝ Հայոց եղեռնը կազմակերպողների վերացմանը, Վիկտոր Համբարձումյանը և Հենրիկ Իգիթյանը՝ մյուսների հետ մեկտեղ պատմական անարդարությունը դատապարտելուն և Արցախը Հայաստանին միավորելու պայքարին և այլն: Մի՞թե պատահական էր, որ հայ ազգային մեծ գործիչը՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, 1921թ. մոխրի վերածված, տկլոր ու սոված մեր հինավուրց երկրի այս հատվածի վերածնունդը տեսավ մտավորական դասի ձևավորման մեջ, որին ջերմորեն արձագանքեցին գիտության, կրթության, երաժշտության, նկարչության, ընդհանրապես ստեղծագործական աշխարհի (գրողներ, ճարտարապետներ և այլն) երևելի անհատները և կազմեցին երկրին ու հանրապետությանը կենսականորեն անհրաժեշտ դասը: Ապա նայեք՝ Աճառյան, Մանանդյան, Սարյան, Սպենդիարյան, Թամանյան …, այս և նրանց նման մյուս մարդիկ որևէ կուսակցության չէին

պատկանում, նրանք մի կուսակցություն ունեին. դա ժողովրդի կուսացությունն էր, որին զինվորագրված էր նաև Զորավար Անդրանիկը: Նրանք անհատապես թե կոլեկտիվ, նախ և առաջ թելադրող են և հետո կատարող: Իշխանությունները պետք է նմաններին լսելու, նրանց հետ խորհրդի նստելու կարողություն ունենան, այլապես, մեղմ ասած, վատ կլինի, որից կտուժեն ժողովուրդն ու պետությունը:

Բնական է՝ պատմական տարբեր ժամանակաշրջաններում մտավորականության դասը առանձնահատուկ է իրեն դրսևորում: Պետականության պայմաններում, հասկանալի է, ավելի հեշտ է ինչպես նրա ձևավորումը, այնպես էլ գործունեությունը: Դրա բացակայության միջոցին անչափ դժվար է իրականացնել այն: Օրինակը այսօրվա մեր սփյուռքը, ավելի վաղ՝ պետականազրկության շրջանում, շատ ավելի ծանր է եղել մտավորականի կայանալը: Այնուհանդերձ, հայ ժողովուրդը գոյատևել և այսօրվան է հասել իր լուսավոր մտավորականների անդուլ ջանքերի և անմնացորդ նվիրումի շնորհիվ: Եվ շատ դեպքերում դա որոշիչ է եղել: Խաղաղ-հանգիստ ժամանակներում հասա-րակության մեջ մտավորականին տեսնողներ շատ չեն լինում, չնայած այդ դասը իր անելիքը միշտ բարեխղճորեն կատարում է, սակայն երբեք չի բարձրաձայնում (իրականում նրան բնորոշ է համեստ ու զուսպ պահվածքը): Բայց հենց ազգը, երկիրը դեմ են առնում դժվար խնդիրների, ժողովրդի բոլոր հատվածները ձայն են բարձրացնում՝ ո՞ւր է մեր մտավորականությունը: Դա պատահական չէ և անչափ ճիշտ է: Բա ո՞ւմ դիմեն, չէ՞ որ խնդիրները առաջացել են հենց իշխանությունների մեղքով, պատճառը նրանք են, հո նրա՞նց չէին դիմելու: Տվյալ դեպքում Աստծուն դիմելն էլ օգուտ չի տալիս: Պետք է դիմել մտավորականությանը, նրա մտքին, հեղինակությանը՝ ճիշտ ճանապարհը գտնելու համար, որքան էլ դա հաճելի չլինի իշխանությանը: Խոհեմ իշխանությունը պետք է այն հաճույքով ընդունի և ամենայն պատասխանատվությամբ ձեռնամուխ լինի գործին՝ խոր հարգանքով օգտագործելով մտավորականության ներուժը: Իրական մտավորականությունը ցանկացած երկրում, մերում առանձնապես, պետք է գործող իշխանությանը օպոզիցիա-ընդդիմադիր լինի: Չեմ ասում քանդող-ավերող կամ թշնամի, ուղղակի ընդդիմադիր: Երկրի համար այսպիսի կեցվածքը ուղղակի բնական անհրաժեշտություն է:

Նա պետք է հանդես գա թարմ, առաջադիմական մտքերով, վեր հանի օրվա կառավարության սխալներն ու թերությունները, եթե կարիք զգացվի, անողոք քննադատության ենթարկի նրան, որպեսզի տեղի չունենա ան-կանխատեսելին: Սա պետք է դիտել նաև որպես մտավորականության դասի պարտականություն:

Ընդհանրապես անհրաժեշտ է ընդգծել, որ մտավորականություն ասվածը դրական կատեգորիա է, զուրկ է ծայրահեղություններից, մտացածին հորինվածքներից: Նրանք այն անձինք են, որոնց խոսքը ազդեցություն ունի հասարակության վրա, ընդունվում է նրա կողմից: Հիմնականում հանդես են գալիս անհատապես, սակայն վճռորոշ պահերի մտավորականությունը համախմբված է ներկայանում՝ այս կամ այն հարցի վերաբերյալ արտահայտելու իր կարծիքը:

Սկզբում նշեցինք, որ մտավորականը միանգամայն անկախ, ազատ և անաչառ կեցվածք ունեցող անձն է: Գուցե որոշները մտածեն, թե բանը ծայրահեղության ենք հասցնում: Բայց այլ կերպ լինել չի կարող: Եթե իրեն մտավորական համարողը գնա այս կամ այն կուսակցության հետևից, լծվի իշխանության առօրյա գործերին, ստիպված է լինելու որոշակի չափով հեռանալ անաչառության, անկողմնակալության գծից: Այսինքն՝ լավագույն դեպքում նվիրումը այս կամ այն կողմին կիսատ է լինելու: Մինչդեռ, ինչպես հայտնի է, կիսատ նվիրում չի լինում, հատկապես մտավոր ասպարեզում: Դրա համար ենք ասում, որ, ըստ Կոստան Զարյանի, «Ազնիվ մտավորականներ»-ը շատ չեն լինում:

Բարեբախտաբար մեզ բախտ է վիճակվել, ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ ներկայումս ոչ միայն տեսնել, այլ նաև շփվել իրական մտավորականների հետ, չնայած հիմա շատ պակաս է նրանց թիվը:

Մեծ առումով, մտավորականը պետք է ոչ թե լսի իշխանավորին, այլ իշխանավորը՝ նրան: Եվ դա պետք է կատարվի, ինչպես հիմա են ասում, տարբեր ֆորմատներով: Նրանք երկուսն էլ ունեն գործելու իրենց առանձին դաշտը: Մտավորականը հանդես է գալիս հարցազրույցներով, հանդիպումներով, հրապարակային ելույթներով, գրավոր հրապարակումներով, նրանց խումբը կամ դասը՝ հայտարարություններով, կոլեկտիվ ներկայանալու կամ ներկայացնելու այլ եղանակներով: Ըստ էության, մտավորականի համար էական նշանակություն չպետք է ունենա, թե տվյալ պահին ով է պետության ղեկին, կամ ինչ քաղաքական ուժի ձեռքում է իշխանությունը: Նա պետք է իր գործն անի: Այդպիսի մտավորականներ էին Մարտիրոս Սարյանը, Վիկտոր Համբարձումյանը, Գրիգոր Գյուրզադյանը, Ակսել Բակունցը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Սերգեյ Համբարձումյանը, Սերգեյ Փարաջանովը, Հենրիկ Իգիթյանը, Լուիզա Սամվելյանը, Տիգրան Պետրոսյանը, Համո Սահյանը և ուրիշներ: Մերօրյա մտավորականների մեջ իր առանձնահատուկ նկարագրով է ներկայանում Հովհաննես Չեքիջյանը:

Տեսնում եք՝ որևէ մեկին պաշտոնապես չենք ներկայացնում՝ համոզված լինելով, որ անգամ այսօրվա

սերունդը նրանց բոլորին էլ լավ գիտի, եթե ոչ, ապա անպայման պետք է իմանա: Անկասկած է, որ մտավորականը պետք է լինի անաղարտ նկարագրի տեր՝ օժտված բարձր բարոյականությամբ: Մինչդեռ այսօր էլ հանդիպում ենք ոչ քիչ հայտնի մարդկանց, որոնց ճանաչում են իբրև մտավորական, բայց իրականում…: Տեսնում ես՝ քամվում է այս կամ այն իշխանավորին (դե ամենաբարձրին էլ չենք ասում), փորձում ամեն կերպ հաճոյանալ նրան, ոչ միայն կիսել, այլ նաև գովաբանել նրա՝ միջակից էլ ցածր կարծիքը, միտքը: Ցավոք, կան այնպիսիք, ովքեր խոնարհվում, երկու կես են լինում հանդիպելիս, կեղծ ժպիտով, խունջիկ-մունջիկ անելով ողջագուրվում, եթե, իհարկե, դիմացինի հայացքում դրա թողտվությունը նկատում են և այլն: Մի՞թե այսպիսի «պերսոնը» մտավորական կոչվելու իրավունք ունի:

Լինում է այնպես, որ ինչ-ինչ նկատառումներով իշխանավորն է այցելում, շնորհավորում նրան տանը: Վա՛յ-մտավորականը դրանից ուղղակի հալվում է, հանդիպման նկարահանած նյութը կտակում տասներորդ սերնդից էլ այն կողմ: Արժանապատիվ մտավորականը երբևէ իր դիրքից չի իջնում: Այդպիսի մի պահվածքի վերջերս մենք ականատես էինք, որը պարգևեց մեծ Մաեստրոն՝ Հովհաննես Չեքիջյանը: Ափսո՛ս, նրա նմանները հիմա քիչ են: Մտավորականների գերակշիռ մասը կենտրոնացած է գիտական հիմնարկ-ներում, ստեղծագործական միություններում, ուսումնական կենտրոններում ու հաստատություններում և այլն: Խորհրդային տարիներին՝ հատկապես 1950-ականների երկրորդ կեսից սկսած, «այդ ամբիոնը» մտավորականությունը լավագույնս էր օգտագործում:

ՀԽՍՀ ազգային ակադեմիայի, ՀԽՍՀ գրողների միության, Երևանի պետական համալսարանի և էլի մի շարք հաստատությունների կոլեկտիվների առաջ հանդես էին գալիս երկրի բարձր ղեկավարները, ծավալվում էր քննարկում, որտեղ իշխանավորները սուր և հասցեական քննադատության էին ենթարկվում մտավորականների կողմից, միաժամանակ իրեց հետ տանում էին նրանց առաջարկություններն ու ներկայացրած պահանջները: Նման ժողովների ամեն ղեկավարի չէ, որ երաշխավորում էին մասնակցել, և ամեն ղեկավար չէ, որ սիրով էր համաձայնում մասնակցել այդպիսի հանդիպումների: Մի խոսքով, պատասխանատվությունն անչափ մեծ էր, հատուկ պատրաստվելը՝ պարտադիր:

Շատ ցավալի է, որ մեր անկախ իրականության մեջ այս ամբիոնը չի գործում: Եզակի, դեպքից դեպք հանդիպումների ժամանակ էլ, իշխանավորի կծու կեցվածքին ի պատասխան, երբեմնի կրակոտ հանդես եկողները լռելով դժգոհ հեռանում են:

Այսքանի հետ մեկտեղ, մեր պարբերականներում, նաև ինտերնետային-վիրտուալ ցանցում չկան ներկայումս մեր երկրին-պետությանը հուզող հրատապ խնդիրների վերլուծություններ, այդ բնույթի այլ հրապարակումներ:

Այս վիճակը լավ բան չի խոստանում, որը նախ և առաջ պետք է անհանգստացնի մեր իշխանություններին: Առաջին հայացքից գուցե դա նրանց դուր է գալիս, բայց ականջի այս հանգստությունը կարող է այնպիսի քուն բերել, որը շատ ծանր կնստի երկրի ու ժողովրդի վրա:

Կարող է որոշ մարդկանց, հատկապես իշխանությունում գտնվողներին, զարմանալի թվա, բայց շատ անհրաժեշտ ու պահանջված, որ իշխանությունները ոչ միայն ցանկալի պայմաններ ապահովեն մտավորականության ազատ ու անկաշկանդ գործունեության համար, այլ նաև նյութապես, բարոյապես և բազմա-կողմանիորեն աջակցեն, որ հասարակական այդ ինստիտուտը կարողանա կատարել իր պատասխանատու խնդիրը՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացում ապրելով: Վերջին հաշվով շատ ու շատ բանով ինչպես երկրի զարգացման, նրա անվտանգության ամրապնդման, այդպես էլ ներքին այնքան անհրաժեշտ համերաշխության ու ժողովրդի համախմբման գործում վճռական է նրա խոսքը: Չի կարելի սա հաշվի չառնել:

Հասկանում եմ, որ ասածս որոշակի քաղաքական մշակույթի պայմաններում կարող է իրականացվել, բայց մի՞թե այլ ճանապարհ կա: Իշխանությունները պետք է հասկանան, որ այս առումով նրանք այսօր պետք է անհանգստանան, որ վաղը կարողանան հանգիստ զգալ իրենց: Ազգի ճակատագրի մասին մտահոգվելով՝ նրանք մտավորականության հետ միասին պետք է քննարկեն օրախնդիր հարցերը, մոդելավորեն ապագան, քանզի իրենք են կրում դրա ողջ պատասխանատվությունը:

Մտավորական լինելը ո՛չ մասնագիտություն է, ո՛չ էլ պաշտոն, այն կոչում է, այն էլ շատ բարձր: Բարձր է նրա համար, որ այն որևէ իշխանական կամ այլ ղեկավար մարմնի կողմից չի շնորհվում, չի նշանակվում: Բայց հետաքրքիր է, որ այդ կոչումից զրկվելու ձև ու հնարավորություն կա:

Ընդունելով անհատի խոսքն ու միտքը՝ ժողովուրդը նրան ճանաչում է որպես մտավորական: Եթե շեղվեց այդ ճանապարհից, երես է թեքում նրանից ու անմիջապես զրկում այդ հասարակական բարձր դիրքից: Հարվածը շատ հզոր է իրական մտավորականի համար, կարելի է ասել՝ կործանարար:

Մեր իրականության մեջ գործում է նաև, այսպես ասած, կեղծ մտավորականի «ինստիտուտը»: Նմանները սովորաբար «ամեն ինչ գիտեն», «երբեք չեն սխալվում», չեն ընդունում որևէ մեկի կարծիքը, չեն

հանդուրժում որևէ մեկին և այլն: Ա՛յ, սրանցից անհրաժեշտ է վախենալ, զգուշանալ, օր առաջ մերժել, քանի որ մեր հասարակության մի ստվար դյուրահավատ հատվածը անմիջապես նրա զոհն է դառնում: Պետք է շեշտել, որ այդպիսի մտավորական կոչվածներով այսօր լցված են մեր և՛ իշխանության, և՛ ընդդիմության շարքերը, ընդհանրապես, պետական, կուսակցական, հասարակական կառույցները: Ինչեր ասես որ այդ մարդիկ չգիտեն, ինչերի ասես որ չեն կարող հասնել, իրագործել, բայց, իհարկե, միայն օդում: Իրական մտավորականը մտահոգ է իր երկրի ներկայով ու ապագայով, անհանգստացած է նաև աշխարհի վաղվա օրով: Այն իշխանությունը, որը մտավորականությանը իրեն թշնամի համարեց, նա հաստատ ձախողված է, անհեռանկար, ապագա չունեցող: Սա պետք է լավ հիշել:

Իսկ ո՞ւր են մեր ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ:

ՀՈՒՇԵՐ ԱՊՐԱԾԻՑ

Աշխարհի կռիվը մշակութային է: Այն ժողովուրդը, որն ունի հզոր մշակույթ, նա էլ հաղթող է: Նրանք, ովքեր այդ ոլորտում հետ են, անհետանում կամ էլ, լավագույն դեպքում, մի կերպ գոյություն են պահպանում:

Պատմում են՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին է եղել, երբ Միացյալ Թագավորության պետական բյուջեն ներկայացրել են վարչապետ Ուինստոն Չերչիլին, վերջինս, նայելով այն, տեսել է՝ մշակույթի տողը դատարկ է, միջոցներ նախատեսված չեն: Կազմողներին հարցրել է, թե դա ինչ է նշանակում, պատասխանել են, որ պատերազմող երկրի միջոցները նպատակահարմար են համարել ուղղել ռազմական ծախսերի: Այդ ժամանակ վարչապետը բյուջեի օրենք գրողներին այսպես է ասել՝ «Այդ կռիվը մենք էլ ինչի՞ համար ենք անում», ու հանձնարարել օրենքի նախագծում պարտադիր նախատեսել մշակույթին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Ցանկանում եմ որոշ տեղեկություններ ներկայացնել 1970 և 1980-ականների Գորիսի մշակութային կյանքից: Այդ ժամանակներից անցել է 30-40 տարի, և հիմա ավելի պարզորոշ է գծագրվում այդ տարիների մշակութային կյանքի պատկերը: Մի կողմից հարկավոր է, որ պահպանվի այն՝ որպես հիշողություն, մյուս կողմից՝ կարող է օգտակար խորհուրդ հանդիսանալ այս օրերի համար, եթե, իհարկե, լսելու կարողություն և տրամադրություն ունեցողներ լինեն:

Նշված տարիների առանձնահատուկն այն էր, որ մշակութային կյանքը մի էական մասով մայրաքաղաքից տեղափոխվել էր շրջաններ: Կլոր տարին այդ շունչը կար, չէր մարում տեղերում, և դա շատ կարևոր էր: Մի տեսակ շրջանների մեջ մրցավազքի տեսք ուներ այդ ընթացքը: Յուրաքանչյուրն ուզում էր, որ երկրի, անգամ միության ամենաճանաչված, ամենահեղինակավոր համերգային, երաժշտական խումբը, անհատ կատարողը ելույթ ունենար իր բեմում, ամենամեծ ու ճանաչված գիտնականը, մտավորականը, գործիչը լիներ իրենց մոտ և այլն:

Կարելի է ասել՝ մշակութային կյանքի ընդհանուր ֆոնն այդ տարիներին երկրում այդպիսին էր: Անկասկած, դա կվկայեն իմ սերնդակիցները, և, իհարկե, երկրի մշակութային կյանքի մասին պատմող հարուստ արխիվային նյութերը: Խոսքը չի վերաբերելու նրան, որ մեր շրջանային, քաղաքային մշակույթի բաժիններն ունեին համերգային, թատերական խմբեր, գեղարվեստի, երաժշտական դպրոցներ և այլն, որ ինքնագործ գեղարվեստական խմբեր էին գործում միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, այլ նրան, թե ինչպիսի լայնածավալ, տարաբնույթ և տարբեր բովանդակության միջոցառումներ էին կազմակերպվում Գորիսում հանրապետական գեղարվեստական կոլեկտիվների, մշակութային ստեղծագործական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ: Այդպիսիք, անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո, տևում էին մի քանի օր, որոնց մասնակից էին արվում մեծ թվով մարդիկ:

Մեկ ծրագրի շրջանակներում կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ՝ հանդիպումներ, ընթերցումներ, գեղարվեստական կոլեկտիվների ելույթներ, ներկայացումներ և այլն: Կփորձեմ ներկայացնել դրանցից որոշները՝ ում կամ ինչին էին նվիրվում դրանք, ինչպես էին անցկացվում, դրսից ովքեր էին մասնակցում, ինչպես նաև դրանց ընթացքում տեղի ունեցած հիշարժան որոշ դեպքեր:

Նախ ասենք, որ յուրաքանչյուր տարվա կտրվածքով որոշակի էր, թե շրջանում (Գորիս քաղաքում) մեծամասշտաբ ինչ միջոցառումներ են անցկացվելու և կոնկրետ երբ: Այն արտացոլվում էր կուսշրջկոմի աշխատանքային ծրագրում, և վերջինս էլ դրանց հիմնական կազմակերպողն ու ղեկավարողն էր:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր միջոցառման համար նախ գրվում էր սցենար՝ այն կազմակերպելու և անցկացնելու գործողությունների կոնկրետ ծրագիր, որով ուղղորդվում էին: Ընդհանուր ծրագրի հիմքը պետականորեն նշվող տոներն էին, սակայն, և՛ քանակով, և՛ ծավալային ու խորքային չափերով ավելի շատ ու ծավալուն էին, բովանդակությամբ՝ ազգային ու ժողովրդական դրանցից դուրս անցկացվող միջոցառումները: Հենց այս երկրորդ շարքի վրա էլ կկենտրոնանանք:

Անցկացվում էին Գորիս քաղաքին նվիրված տոնը, բերքի տոնը, «Ոսկե աշուն» տոնը, Ուսանողական փառատոնը և այլն: Դրանց զուգահեռ, ինչպես այլ շրջաններում, այնպես էլ մեզ մոտ, ձգտում էինք միջոցառումների ծանրության կենտրոնը տեղափոխել մեր տարածքի մարդկանց ոգևորող և նրանց հպարտություն ներշնչող թեմաների ուղղությամբ: Հատկապես խոսքը վերաբերում է Գորիսի տարածքի ծնունդ անվանի գրողների, երգահանների, արվեստագետների, գիտնականների, ազգային-պետական անվանի գործիչների ծննդյան, գործունեության հոբելյաններին, նրանց նվաճումներին, մի խոսքով՝ այն դրական-ցանկալիին, ինչը ոգևորում էր մարդկանց:

Պետք է շեշտել, որ ի տարբերություն պետական տոների, այս վերջին շարքինն անցնում էր ժողովրդի բուռն ակտիվությամբ և ջերմ ու անկեղծ մասնակցությամբ: Բոլորն անհամբեր սպասում էին, իսկական տոնական տեսք էր ստանում Լեռնահայաստանի մայրաքաղաքը՝ տոնական հագուկապով իր քաղաքացիների հետ միասին:

Մեծամասշտաբ էին Ա. Բակունցին նվիրված միջոցառումները: Դրանք տևում էին մի քանի օր: Մինչև մեծ գրողի հոբելյանական երեկոն անցկացվում էին ընթերցումներ, քննարկումներ, այցելություններ, նրա ստեղծագործությունների թեմաներով ցուցադրվում կինոնկարներ, տրվում ներկայացումներ: Ամբողջ քաղաքում, մասնավորապես՝ նրա հարազատ Մաշտոցի փողոցում, գորիսյան առատ բարիքներով սեղաններ էին բացվում, ցուցադրվում էին մեր ազգային կենցաղային ողջ հարստությունը, թևածում էր երգն ու երաժշտությունը: Ամենուր անկաշկանդ քեֆ և ուրախություն էր:

Համաժողովրդական հնչեղությամբ միջոցառումներ էին արվում՝ նվիրված մեր մեծ գուսան Աշոտին (Դադալյան), գրողներ Սուրեն Այվազյանին, Սերո Խանզադյանին, Գարեգին Սևունցին, կոմպոզիտոր Աշոտ Սաթյանին, անվանի գիտնականների, մտավորականների, պետական գործիչների, ովքեր հայրենիքին մեծ ծառայություններ մատուցելու հետ նաև Գորիսին նոր փառք ու հեղինակություն էին բերել: Հների հետ միասին նոր անուններ էին ի հայտ գալիս, որը լրացնում և հարստացնում էր երևելիների ցանկը:

Առանձնահատուկ նշվել է Կոնստանտին Օրբելյանի Հոբելյանը: Նա ցանկություն ուներ իր հայրենի Տաթևում տուն կառուցել, սակայն ինչ-ինչ պատճառներով այդ ծրագիրը չիրականացավ:

Բացառվում էր, որ նման միջոցառումներն անցկացվեին առանց հանրապետական մշակութային և ստեղծագործական միությունների, գիտության ու արվեստի հեղինակավոր ներկայացուցիչների, առանց հանրապետությունում լայն ճանաչում և ընդունելություն ունեցող մտավորականների, անգամ՝ սպորտաշխարհի հերոսների (Ալբերտ Ազարյան, Յուրի Վարդանյան և ուրիշներ):

Պարտադիր պայման էր գորիսյան ծագմամբ անվանի մարդկանց հրավիրելը: Նրանք մեծ խանդավառությամբ գալիս և ակտիվորեն մասնակցում էին այդ տոնակատարություններին: Սերո Խանզադյանի, Սուրեն Այվազյանի հետ հաճախակի մեր միջոցառումների հյուրերն էին ՀՀ Գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը, գրողներ Սիլվա Կապուտիկյանը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հրանտ Մաթևոսյանը, Մկրտիչ Սարգսյանը, Ռազմիկ Դավոյանը և ուրիշներ: Իր նահապետական կեցվածքով նրանց գլխին էր Գուսան Աշոտը:

Այսօրվա սերնդի համար գուցե զարմանալի լինի, բայց նշածս տարիներին գորիսյան շքեղ միջոցառումներին, և ոչ միայն դրանց, մեր բեմերից հնչում էին ՀՀ Պետական ակադեմիական երգչախմբի (ղեկավար՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյան), ՀՀ Պետական

էստրադային նվագախմբի (ղեկավար՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյան), ՀՀ Ռադիոյի և հեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվան ժողգործիքների, ՀՀ Պարի պետական համույթի և մյուս հեղինակավոր կոլեկտիվների կատարումները: Մեր արվեստասեր հասարակության համար մշակույթի պալատի բեմից ելույթներ են ունեցել Հայաստանի սոխակ, աշխարհահռչակ Գոհար Գասպարյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Տաթևիկ Սազանդարյանը (կազմակերպել ենք նաև մեր հայրենակցուհու մեծարման միջոցառումը), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, անզուգական Լուսինե Զաքարյանը, հայ գուսանական-ժողովրդական-ազգային երգերի ժամանակի բոլոր փայլուն կատարողները՝ Օֆելյա Համբարձումյանը, Հովհաննես Բադալյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Նորայր Մնացականյանը, Ռուբեն Մաթևոսյանը, Վալյա Սամվելյանը, Ռաիսա Մկրտչյանը... որն ասես, որը թողնես:

Մեր միջոցառումներին առանձնահատուկ շուք էին տալիս հայտնի ասմունքողները՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վլադիմիր Աբաջյանը, Սիլվա Յուզբաշյանը, Ազատ Գասպարյանը...

Մեր հյուրերն էին ՀՀ Գիտությունների ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Պետական բժշկական համալսարանի և մյուս բուհերի լայն ճանաչում ունեցող անվանի գիտնականները: Մասնավորապես՝ լեզվաբաններ, գրականագետներ, պատմաբաններ՝ Հրանտ Թամրազյանը, Էդուարդ Ջրբաշյանը, Արամայիս Մնացականյանը, գորիսյան քառյակը՝ ակադեմիկոսներ Գագիկ Սարգսյանը, Լենտրուշ Խուրշուդյանը, Հրաչիկ Սիմոնյանը, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, վաստակաշատ պատմաբաններ Վ. Բարխուդարյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Բ. Հարությունյանը և շատ ուրիշներ:

Իրենց մասնակցությամբ միջոցառումներին առանձնակի փայլ էին հաղորդում մեր մեծ կոմպոզիտորներ Էդուարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը (երկուսն էլ՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանը, կոմպոզիտորներ Ռոբերտ Ամիրխանյանը, Մարտին Վարդազարյանը, Ղազարոս Սարյանը, աշխարհահռչակ օպերային երգչուհի Արաքս Մանսուրյանը և այլք:

Ասեմ, որ այս և մյուս երևելի անձանց այցը Գորիս չէր սահմանափակվում միայն միջոցառումների մասնակցությամբ: Նրանք այցելում էին կոլեկտիվներ, հանդիպումներ ունենում, հանդես գալիս ելույթներով, այցելում տեսարժան վայրեր: Քանի որ առիթը ներկայացավ, պատմեմ հետևյալը:

Միջոցառումներն ավարտելուց հետո, 1980-ականներին, ստույգ թիվը չեմ հիշում, Տիգրան և Արաքս Մանսուրյաններին, Ղազարոս Սարյանին և Ռազմիկ Դավոյանին ուղեկցել եմ Տաթևի Մեծ անապատ: Աշնանային սքանչելի մեղմ օր էր, բնաշխարհը՝ հազար գույն հագած: Թափանցիկ ամպի փափուկ մալանչները երբեմն մեղմիկ շոյում էին հինավուրց անապատի եկեղեցու գմբեթը: 17-րդ դարի երկրորդ կեսի կառույցի շքամուտքի անկրկնելի հպարտ կամարները կախարդել էին հյուրերին: Մեր երկրում չկա մի անկյուն

որտեղ չի խիզախել հայի ճարտարապետական միտքը:

Արաքս Մանսուրյանը եկեղեցու խորանից իր աստվածային սոպրանոյով հնչեցրեց մեծ Կոմիտասի «Սուրբ-Սուրբ»-ը: Բոլորով երանության մեջ էինք: Երկրորդ կախարդողը, ինչպիսին բնաշխարհն է, այն էլ՝ գորիսյանը, հաստատ չկա, չի էլ լինելու:

Ինչպես կարելի է չնշել, որ այն երևելի օրերին բազմիցս մեզ հետ են եղել հայ բեմի և կինոյի մեծ երախտավորներ Սոս Սարգսյանը, Միհեր Մկրտչյանը: Գորիսեցին ջերմորեն շփվել է հայտնի կինոռեժիսորներ Էդմոն Քյոսայանի, Ֆրունզե Դովլաթյանի հետ, վայելել հայ մեծ դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Արմեն Ջիգարխանյանի կենդանի խաղը՝ Գորիս գյուղի քարաբուրգերի անտառում Մխիթար Սպարապետ և հայտնի մյուս կինոֆիլմերում նկարահանվելիս:

Հրավիրվողների մեջ հաստատուն տեղ ունեին նաև նկարիչներն ու արվեստագետները: Իր սլացիկ հասակով և հպարտ տեսքով արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր, գեղեցկուհի Լուիզա Սամվելյանը ոչ միայն զարդարում էր միջոցառումների բեմը, այլ նաև մեսրոպյան կլանող ոսկեղենիկով արվեստի մասին իմաստուն խոսք էր մատուցում մեր հասարակությանը: Նրա հետ մեկտեղ մեզ իր ծանրակշիռ մասնակցությունն ու խոսքն էր բերում նաև Երևանի Մանկական գեղարվեստական կենտրոնի հիմնադիր ու տնօրեն, հայտնի արվեստաբան, խիզախ հայ ու քաղաքացի (ով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, ի լուր աշխարհի, Միխայիլ Գորբաչովի լաքոտ ճակատին կնքեց նրա իրական անվանումը) Հենրիկ Իգիթյանը:

Այս երկու երևելի անձանց հետ կապված երկու փոքրիկ հուշ կներկայացնեմ. կարծում եմ՝ արժե:

1980-ական թվականներին ես Գորիսի կուսշրջկոմում ղեկավար աշխատանքի էի: Կազմակերպված հերթական միջոցառման ավարտից հետո հյուրերի հիմնական մասը մեկնեց Երևան: Մի քանի հոգի որոշեցին մնալ և վայելել գորիսյան սքանչելի բնաշխարհը, Տաթևն ու Խնձորեսկը, որից հետո վերադառնալ մայրաքաղաք:

Խմբի մեջ արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Լուիզա Սամվելյանն էր, Երևանի հանրապետական գեղագիտական կենտրոնի հիմնադիր-տնօրեն, հայտնի արվեստաբան Հենրիկ Իգիթյանը, գրող, հրապարակախոս Ռազմիկ Դավոյանը: Նրանք գիշերեցին Սդղի գյուղ կոչվող ջրամբարի մոտ կառուցած հյուրատանը:

Առավոտյան, ավելի ճիշտ՝ կեսօրին մոտ, ղեկավար կազմից երկու թե երեք հոգով գնացինք հյուրերին ճանապարհելու: Պատրաստած առատ սեղանից օգտվելու հետ մեկտեղ ակտիվ զրույց էր ընթանում: Թեման արվեստն էր, հիմնականում՝ նկարչությունն ու երաժշտությունը: Իրեն հատուկ հպարտ ու հաղթական կանացի կեցվածքով սեղանի գլխին բազմել էր հանրապետությունում հանրաճանաչ մտավորական, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր, գեղեցկուհի Լուիզա Սամվելյանը: Մյուսները կազմում էին սեղանի շարունակությունը:

Արվեստի մասին ընդհանրապես, և նրա զարգացումների հարցի շուրջ հիմնականում խոսում էին Լ. Սամվելյանը և Հ. Իգիթյանը: Պետք է շեշտել, որ նրանք ակտիվությամբ իրար չէին զիջում:

Զանգ ստացանք, որ հանրապետության մթերումների նախարար Հովակիմյանը Գորիսում է ու ցանկանում է հանդիպել շրջանի ղեկավարին: Նրան հրավիրեցինք, և 10-15 րոպե անց Հովակիմյանն արդեն մեզ մոտ էր: Նա միջինց երևի թեթևակի ցածր հասակի, լիքը-լիքը, միջին տարիքի, հանդարտ, հաճելի հայացքով մարդ էր: Ես նրան մոտիկից առաջին անգամ էի հանդիպում, մյուսներն, իհարկե, ոչ:

Նախարարի ընդունելությունը ջերմ էր, նա տեղ զբաղեցրեց, միացավ խմբին: Ժամանումից անցել էր երևի մեկ ժամ, նա ոչ մի խոսք դեռևս չէր ասել, ոչ ոք նրա ձայնը չէր լսել: Ճիշտն ասած Իգիթյանն ու Սամվելյանը հերթ չէին տալիս որևէ մեկին խոսելու, այդ թվում նաև՝ Հովակիմյանին: Երբ նրանցից մեկը ավարտեց միտքը, Հովակիմյանն անմիջապես մեջ մտավ՝ ասելով.

-Կարելի՞ է՝ մի խոսք էլ ես ասեմ:

Բոլորն իսկույն արձագանքեցին, որ սիրով լսում են: Մթերումների նախարարը նախ խոսեց նկարչությունից, ապա անցավ երաժշտությանը: Նրա խոսքը տևեց մոտավորապես քսան րոպե: Այդ ընթացքում սեղանի շուրջ քար լռություն էր տիրում: Բոլորի համակ ուշադրությունը Հովակիմյանի խորը հիմնավորումներով մտքերին և գրավող խոսքին էր: Երբ ավարտեց այսպես ասած ելույթը, շուրջ մեկ րոպեի չափ պառւզա-լռություն էր, որից հետո այն խախտեց երջանկահիշատակ Հ. Իգիթյանը.

- Տիկին Լուի՛զա,- դիմելով նրան,- ես ի՞նչ արեց այս մարդը: Ըստ երևույթին մենք մեր պետական այրերին ճիշտ չենք ճանաչում, ես ցնցված եմ:

Ապա դառնալով նախարարին՝ ասաց.

-Շատ կներեք, ընկե՛ր Հովակիմյան, դուք մթերումների նախարար եք, այդ գիտելիքները ձեզ որտեղի՞ց: Ապշած եմ, միաժամանակ՝ հիացած:

Իգիթյանն արտահայտել էր բոլորիս կարծիքն ու տպավորությունը, այդ թվում նաև՝ Լուիզա Սամվելյանի:

***

Այդ օրը Լուիզա Սամվելյանը նաև ասպիսի մի հետաքրքիր զրույցի է արժանացրել մեզ:

«Խորհրդային միության մի շարք հանրապետություններում մասնակցել եմ արվեստագիտությանը նվիրված միջոցառումների՝ միութենական, միջազգային կոնֆերանսների, այլ չափանիշներով քննարկումների, հանդիպումների և այլն: Որ հանրապետությունում կազմակերպվում էր միջոցառումը, նրանք էլ հոգում էին մասնակիցների սպասարկումը, վերջում էլ ընդունված էր նվեր տալ:

Հերթական հավաք-սիմպոզիումը կայացել էր Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում: Այն ավարտելուց հետո ադրբեջանցի գործընկերուհիս եկել էր երկաթուղային կայարան՝ ինձ ճանապարհելու Երևան: Նա հետը բերել էր ուղղանկյուն, ստվարաթղթե մի մեծ արկղ և ասաց, որ իմ նվերն է: Ես ապշած-զարմացած ասացի՝ «Այդ ի՞նչ նվեր է՝ նման չափերի, ի՞նչ միտք ունի այդպիսի նեղություն կրել»: Նա հանգստացնելով ասաց, թե դա նեղություն չէ, ամեն ինչ կարգին է, բերածը «Ալիևսկի» կոչվող թեյ է:

Երբ օգտագործեմ, կտեսնեմ, որ այն իմ տեսածներից ավելի լավն է:

Ասացի՝ բանը նրանում է, որ ես ընդհանրապես թեյ չեմ խմում: Տանը թեյի այդ մեծ կապոցը դնելու տեղ էլ չունեի, բարձրացրին ու դրեցին աննկյունում տեղադրված պահարանի գլխին: Հետո այդ մասին ես ամբողջությամբ մոռացա:

Ամիսներ հետո Երևանում անց էր կացվում արվեստին և արվեստագիտությանը նվիրված միջազգային գիտաժողով: Աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում նաև եվրոպական, մասնակիցներ էին եկել: Անգլիայի ներկայացուցիչը մի տղամարդ էր: Նրան հարցրի՝ արդյոք տեղյա՞կ է, որ վերջերս Լոնդոնում արվեստագիտության վերաբերյալ հրատարակվել է արժեքավոր մի գիրք: Նա պատասխանեց՝ իհարկե, ավելին, այն արդեն ինքն ունի: Ես ասացի, որ շատ կցանկանայի գիրքն ունենալ, բայց ցավոք չկա այդ հնարավորությունը:

Անգլիացին, ինձ համար անսպասելի, ասաց, թե ինքը գիրքը կուղարկի: Ինձ թվաց, որ հենց այնպես ասաց, կգնա ու կմոռանա:

Միջոցառումից մեկ-երկու ամիս անց ծանուցում ստացա, որ փոստի բաժանմունքում ստանալիք (բանդերոլ) ունեմ: Մտքովս չէր էլ անցնում, գնացի, ստացա: Անգլիացու ուղարկած գիրքն էր: Անչափ ուրախ էի:

Մի քանի օր անհանգիստ մտածում էի՝ ինչպես երախտագիտությունս հայտնեմ անգլիացի կոլեգային: Չէի կարողանում կենտրոնանալ մի բանի վրա, որը հետաքրքիր կլիներ նրա համար:

Մեկ էլ որտեղից որտեղ հիշեցի, որ անգլիացիները հատուկ վերաբերմունք ունեն թեյի նկատմամբ ու շատ են սիրում: Անմիջապես պահարանի գլխից իջեցրի Բաքվից նվեր ստացած թեյի տուփը, բացեցի այն և միջից թեյը ուղիղ երկու կես արեցի: Մի կեսը ծանրոց սարքեցի և ուղարկեցի անգլիացուն, մյուս կեսը նույն տուփով դրեցի պահարանին՝ իր տեղում:

Անհամբեր սպասում էի, թե անգլիացին կարձագանքի՞ արդյոք, և ինչպիսի՞ն կլինի այն: Որոշ ժամանակ անց մոռացա այդ մասին:

Մի օր էլ նամակ եկավ Լոնդոնից: Անգլիացին էր գրել: Բառացի չեմ հիշում, սակայն իմաստն այս էր՝ «Որպես անգլիացի խմել եմ աշխարհի ամենալավ ու հետաքրքիր համ ու հոտի թեյերը: Բայց այն, ինչ դուք եք ուղարկել, գերազանցում է բոլորին, անմահական է»: Եվ շնորհակալություն էր հայտնում այդ «թանկ» նվերի համար ու ասում, որ երբեք այն չի մոռացվի:

Անգլիացու գնահատականից հետաքրքրված մյուս կեսը բացեցի և թեյ պատրաստեցի: Դուր եկավ ինձ, և այդ օրվանից սկսեցի թեյ խմել:

«Ալիևսկի» թեյը իսկապես շատ լավն էր: Հյուրերիս դրանով էի հյուրասիրում, մինչև վերջնականապես սպառվեց»:

***

Մեր մշակութային միջոցառումների թագն ու պսակը հայ արձակի անգերազանցելի վարպետ, Գորիսի զավակ Ակսել Բակունցին նվիրված տոնակատարություններն էին (նաև դրսից հեղինակավոր մասնակիցների ու նրանց թվաքանակի առումով):

Ներկա էին լինում մեծ գրողի ընտանիքի անդամները, հարազատներն ու

բարեկամները՝ որդին՝ ՀՀ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Սևադա Բակունցը, եղբայրները, քույրերը, նրանց ժառանգները, Բակունցների տոհմի ներկայացուցիչները: Հարկ եմ համարում ընդգծել, որ 1970-ականներից սկսած անձամբ եմ տեսել՝ Սևադա Բակունցը մինչև իր վաղաժամ մահկանացուն կնքելը՝ 1983 թվականը, միշտ հրավիրվում էր Գորիսում անցկացվող միջոցառումներին: Սիրով էր գալիս: Եղել է այնպես, որ ինչ-որ միջոցառման հարմար ենք գտել չանհանգստացնել նրան: Հետո իմանալով դրա մասին՝ դժգոհել, նեղացել է, թե ինչո՞ւ իրեն մասնակից չենք արել:

Մի խոսքով, Գորիսն ինչպես Ակսել Բակունցի, այնպես էլ՝ նրա որդու համար ամեն ինչ էր: Հոր գեղագիտական բարձր ճաշակը, նյութի խոր իմացությունն ու բակունցյան վերլուծությունը, զուսպ, հավաք լինելը, երկրին և ժողովրդին անսահման նվիրվածությունը գենետիկայով լիովին փոխանցվել էր որդուն: Մանրամասնելու հարկ չկա:

1974թ. Գորիսում լայնորեն նշվել է Ա. Բակունցի ծննդյան 75-ամյակը: Ուսումնական հաստատություններում, աշխատանքային կոլեկտիվներում արվել են բազմաթիվ միջոցառումներ՝ կարդացվել դասախոսություններ, ներկայացվել նրա ստեղծագործությունները:

Միջոցառումները եզրափակվել են հանդիսավոր երեկոյով: Հյուրերի համար քաղաքի «Զանգեզուր» ռեստորանում կազմակերպվել է ճաշկերույթի սեղան: Այն ղեկավարում էր կուսշրջկոմի առաջին քարտուղար Արամ Հարությունյանը, ով, ի դեպ, բարձր մակարդակով էր կատարում այդ պարտականությունը: Ճաշկերույթի միջնամասում նա բաժակ բարձրացրեց Ա. Բակունցի հետ միասին նրա ընկեր ու բարեկամ՝ հանճարեղ Ե. Չարենցի համար: Բակունցյան օրերին մասնակցում էր նաև Չարենցի դուստր Արփենիկը: Ելույթներ եղան այդ կապակցությամբ: Երբ թվում էր, որ կենացի կապակցությամբ ամեն ինչ ավարտվել է, դահլիճի կենտրոն եկան Բակունցի որդին՝ Սևադան և Չարենցի դուստրը՝ Արփենիկը՝ դառը օղու գավաթները ձեռքներին: Մոտեցան իրար՝ գլուխ գլխի մսացին մեկ րոպե տևողությամբ, ապա գերմանական կարգով՝ թևը թևով անցկացնելով (բրուտերշաֆթ)՝ ըմպեցին դառը հեղուկը և դատարկ բաժակները զարկեցին մարմարե հատակին: Ապակու կտորտանքը փռվեց դահլիճով մեկ:

Տիրեց մի խոր ու տիրական լռություն: Ոչ ոք չէր փորձում խախտել այն: Օդում թևածում էին Բակունցի և Չարենցի անմահ հոգիները՝ մեկ մոտենում էին իրար, մեկ հեռանում, մինչև աստիճանաբար ցրվեց մղձավանջը, և ներկաները սկսեցին զգալ իրենց գոյությունը:

Սևադա Բակունց մարդուն, մտավորականին բնորոշող ևս մի փոքրիկ դիպվածի եմ ականատեսն եղել: Մեկ-երկու օր էր՝ նա Գորիսում էր: Եկավ կուսշրջկոմ: Ողջունելուց հետո հարցրեց, թե կարո՞ղ ենք Գորիսի Մանկավարժական ինստիտուտ գնալ, որոշ հարցեր ունի, ցանկանում է պարզել, և եթե հնարավոր է, ուղեկցեմ իրեն: Պատասխանեցի, որ սիրով կուղեկցեմ:

Գնացինք: Հաստատության ռեկտորը երկրորդ հարկում էր նստում, տեղում էր: Ս. Բակունցի առաջ բացեցի դուռը, և նա ներս մտավ, ես էլ՝ նրա հետևից:

Ռեկտորը սեղանի հետևում նստած՝ սիգարետի հատիկը մատերի արանքում

շուռումուռ էր տալիս, ինչպես անում են վառելուց առաջ: Տեսնելով մեզ՝ Շահեն Բագրատի Օհանջանյանը (նա, ով հավերժական կոնֆլիկտի մեջ էր իր համագյուղացի (Խնձորեսկ) դասախոս, դոցենտ Վազգեն Հովհաննեսի Բաղդագյուլյանի հետ, և շրջկոմի բյուրոյում իրենց հարցի քննության ժամանակ ասում էր, որ Վազգենը խառնակիչ է, բանսարկու, չի թողնում աշխատել, իսկ Բաղդագյուլյանն էլ նրա հասցեին ավելի թունդ արտահայտվելուց հետո խոսքն այսպես էր ամփոփել՝ «Ասում են՝ իբրև պատմական գիտությունների դոկտոր է, բայց մինչև ինքը չասի, ոչ ոք չի իմանա») կանգնեց տեղում, առանց սպասելու հյուրի ձեռք մեկնելուն՝ աջն առաջ պարզեց՝ մյուս ձեռքում պտտեցնելով սիգարետի հատիկը:

Նկատելի սառը ստացվեց Ս. Բակունցի հետ նրա ձեռքսեղմումը: Ոտքի վրա Բակունցը հարցրեց, թե ինչպես են հաստատության գործերը, ռեկտորը պատասխանեց՝ «Վատ չեն, ոչինչ»:

Մեկ այլ հարց տվեց՝ կապված ինստիտուտի հեռանկարի հետ: Օհանջանյանը, արդեն երկու ձեռքերում ոլորելով սիգարետի հատիկը, գլուխն ու դեմքը աջ ու ձախ մի տեսակ ծամածռելով՝ թե՝ «Սևադա Ալեքսանդրիչ, էս մեր ժամանակներում ո՞վ ա ում լսում, ո՞վ ա բանի տեղ դնում մեր խոսքը..», և էլի անլուրջ մի քանի արտահայտություններ: Ռեկտորի այդպիսի պահվածքը վերջնականապես հունից հանեց ծով համբերության տեր ակադեմիկոսին: Ինչպես հարկն է՝ նա տեղը դրեց Օհանջանյանին: Վերջինս մեռած էր, բայց ոչ՝ թաղված:

Ձևական մեկ-երկու փոքր հարցումից հետո դիմելով ինձ՝ ասաց՝ « Սուրե՛ն, գնանք»:

Ռեկտորի առանձնասենյակից դուրս գալիս երբ ծածկում էի դուռը, նկատեցի, որ նա մեխանիկորեն դեռ մատների արանքում ոլորում էր սիգարետը:

***

Գորիսի շրջկենտրոնի «Ավանգարդ» պետական տնտեսության մշակույթի պալատում մեծ հանդիսավորությամբ նշվում էր քաղաքի հարազատ զավակ, 20-րդ դարի նշանավոր գուսան Աշոտ Դադալյանի ծննդյան 70-ամյակը: Հանդիսությանը մասնակցում էին մեծ քանակությամբ հյուրեր՝ գրողներ, արվեստագետներ, գիտության նշանավոր դեմքեր, իհարկե, նաև հեղինակավոր համերգային խմբեր՝ առաջատար երգիչ-երգչուհիների հետ միասին:

Միջոցառմանը մասնակցում էր և ելույթ ունեցավ նաև Կապանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Արմենակի Մինասյանը. նա շատ ջերմ հարաբերություններ ուներ մեր շրջկոմի առաջին քարտուղար Արամ Առաքելի Հարությունյանի հետ: Նշելով մեծ գուսանի ծառայությունները հայ երգարվեստին ու մեր ժողովրդին՝ իր խոսքն ավարտեց այսպես՝ «Երբ ծանոթանում ենք հնագույն ժամանակների իմաստունների մասին նյութերի, այդ մարդիկ մեզ ներկայանում են մի տեսակ ոչ երկրային, ավելի շատ՝ երկնային, անտեսանելի, անշոշափելի: Բայց, իրոք, նրանք երկրային են, մեզ հետ, մեր մեջ են»: Եվ մատնացույց անելով գուսանին՝ ասաց.

-Ահավասիկ իմաստունը մեզ հետ նստած է՝ Աշուղ Աշոտը:

Նրա խոսքն անմիջապես համեմվեց դահլիճի բուռն ու երկարատև ծափահարություններով:

Ռ.Ա. Մինասյանից հետո ելույթ ունեցավ գուսանի հետ նույն փողոցում ծնված ու մեծացած, հայ արձակի նշանավոր ներկայացուցիչ Սերո Խանզադյանը: Պետք է նշեմ, որ նման միջոցառումներին Սերոյի քեֆը միշտ էլ տեղն էր լինում: Այդ օրը ևս բացառություն չէր:

Գորիսյան որևէ միջոցառում նա բաց չէր թողնում, շատ-շատ էր կապված հայրենի քաղաքին, բացի այդ՝ նրա հարազատների մի զգալի մասը Գորիսում էին ապրում, ժողովուրդն էլ նրան միշտ ջերմորեն էր ընդունում:

Այս միջոցառումից մեկ-երկու ամիս առաջ ՀՀ Գիտությունների ակադեմիայում Ս. Խանզադյանը ևս անդամ ընտրվելու համար դրել էր իր թեկնածությունը, սակայն անհրաժեշտ քանակի ձայներ չէր հավաքել:

Նեղացած էր, բայց միշտ ոգին բարձ էր, տիրական: Ելույթը սկսեց հին-հին օրերից, երբ գուսանը մեր լեռնալանջերին, ձորերում և քարափների վրա գառնարած էր և ըմբոշխնում էր զանգեզուրյան հեքիաթային բնաշխարհի ողջ շունչն ու ոգին, որից էլ ծնվեցին նրա հոգեզմայլ երգերը և այլն: Ելույթի վերջնամասում գրողը չմոռացավ Գիտությունների ակադեմիայի ընտրությունները: Դիմելով գուսանին՝ ասաց.

-Սիրելի՛ Աշոտ, էն վերևներում (ձեռքը բարձրացնելով) մարդիկ կան, որոնց ակադեմիկոս են ասում: Ակադեմիկոսը նրանք չեն, դու ես, ես եմ ակադեմիկոսը, նրանցից ի՞նչ ակադեմիկոս, պրանեմ դրանց ակադեմիան:

Դահլիճից կանացի շշուկներ լսվեցին՝ «Սերոն խմած է, տեսեք ինչ ասաց»: Անմիջապես որսալով շշուկը՝ գրողն արձագանքեց՝ «Բա որ խմած եմ, էն չորս տղան ո՞ւմս են»:

Ծիծաղն ու ծափահարությունները դահլիճում երկար ժամանակ չէին դադարում:

***

1980-ականի վերջերին աշուղի առողջությունը նկատելիորեն վատացել էր: Ամեն օր աչքներիս առաջ էր նա: Վերջին 20-25 տարիներին մշտապես Գորիսում էր բնակվում, իրենց հայրական տանը նաև որոշ բարելավումներ էր արել:

Հաշվի առնելով դա, ինչպես նաև առաջացած տարիքը՝ կուսշրջկոմում որոշվեց կազմակերպել մի քանի մեծամասշտաբ միջոցառում՝ նվիրված գուսանին, տեսանկարահանել դրանք, որպեսզի նրա մասին հարուստ արխիվային նյութեր մնան: Եվ ի պատիվ այն ժամանակվա ղեկավարների, անկախ ամեն ինչից, կազմակերպվեց 2-3 մեծ միջոցառում՝ նվիրված Գուսան Աշոտին: Մասնակցել են անվանի գրողները, արվեստագետները, գիտության մշակները, համերգային և պարի ամենահեղինակավոր խմբերը, անհատ կատարողները:

Գուսանի համար բեմին հարմար դրվել էր բարձր գահավորակ, որին բազմում էր նա: Փառավոր էր այդ օրերի հայ աշուղապետի տեսքն ու հմայքը:

Միջոցառումների մակարդակին և այն ամենին, ինչը փորձում եմ ներկայացնել,

կարող եք ծանոթանալ հանրապետության Ռադիոհեռուստատեսության կառույցի արխիվներում. դրանում լիովին կհամոզվեք:

Միջոցառումներից մեկի ավարտին ելույթ ունեցավ Գուսան Աշոտը: Նա խոսքն ավարտում էր իր մի բանաստեղծությունով, որը բավական երկարաշունչ էր: Արտասանության կեսին մեկ էլ գուսանը կանգառ արեց. ոնց որ մոռացել էր շարունակությունը: Դահլիճի առաջին շարքում նստած էր նրա երգչուհի-գեղեցկուհի տիկին Արաքսյան: Դիմելով նրան՝ գուսանն ասաց՝ «Արաքսի՛, ասի՛»:

Արաքսյան բանաստեղծության շարունակվող տողը հուշեց, և գուսանը շարունակեց ասմունքելը՝ ավարտելով ելույթը: Բոլորը, հոտնկայս, երկարատև ծափահարում էին:

Գուսանը սովորություն ուներ, երբ որևէ միջոցառում էր կազմակերպվում, կամ իր հետ կապված ինչ-որ բան արվում, պարտադիր գալիս էր շրջկոմ, հայտնում իր շնորհակալությունն ու երախտագիտությունը: Այս միջոցառումից հետո էլ եկավ: Զրույցում ասացի՝ ոչինչ, որ տողը մոռացել էր, բանաստեղծությունն իրոք շատ երկարաշունչ էր: Ծիծաղելով՝ նա այսպես պատասխանեց.

-Ա՛յ մարդ, ի՞նչ մոռանալ, ուղղակի աչքս ընկավ Արաքսյային, ինձնից քիչ նեղացած էր, մտածեցի՝ սրանից լավ պահ չկա: Կանգառ արեցի, որ հետս խոսի: Ամեն ինչ գերազանց եղավ:

Բոլորս լիաթոք ծիծաղեցինք. ի՛նչ սքանչելի սիրտ ու հոգի ուներ գուսանը: Երջանիկ են նրանք, ովքեր ծանոթ են եղել կամ շփվել են հետը, այդ թվում՝ նաև ես:

Մի օր եկավ իմ աշխատանքի վայր և այսպես սկսեց զրույցը.

-Այսօր մի մարդ ինձ տարօրինակ հարց է տվել, թե՝ «Գուսա՛ն, քանի երգ ես գրել»: Դա հարցնելու բա՞ն է: Եթե մարդ մի երգ գրի, և ժողովուրդը այն երգի, լիուլի բավական է, այդ մարդը կգնահատվի ու կհիշվի: Բան չեմ ասում, 500-ից ավել երգեր ունեմ,- ու ձեռքով ցույց տալով կրծքավանդակի ձախ հատվածն՝ ասաց,- բայց այստեղ դեռ շատ կա է, շա՛տ-շա՛տ:



2024 թվականի սեպտեմբերի 12-ին «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնը» ամփոփեց «Մեր բանն ու գործը» ծրագրի իննամսյա աշխատանքները: Ծրագրի շրջանակում ձևավորված կամավորական խմբերն առաջադրեցին կարևոր թեմատիկ հարցեր՝ ներառյալ Գորիս համայնքում կնոջ դերը, հանդուրժողականության ու անհանդուրժողականության դրսևորումները և խորհրդային արժեհամակարգի հետքերը:

Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցեցին աշակերտներ, ուսանողներ, դասախոսներ, ուսուցիչներ, գրող-հրապարակախոսներ, ինչպես նաև Գորիսի համայնքապետարանի, համայնքային և քաղաքացիական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սույնով ներկայացնում ենք աշխատաժողովի մասնակից **Սուրեն Վարդանյանի** մտորումները՝ առանց խմբագրման:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻՑ

ԶՐՈՒՅՑ՝ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

Այս թեմայով թերևս երբևէ ցանկություն չեմ ունեցել խոսք ասելու, բայց 15-20 օր սրանից առաջ Գորիսի պետհամալսարանի դասախոս հարգարժան Մ. Ս. Քումուշի հրավերով մասնակցել եմ մի քննարկման՝ նվիրված ընտանեկան կյանքում հարաբերությունների, դրանց զարգացումների հարցերին: Պետք է ասեմ, որ դասախոսը ուսանողների հետ միասին բարեխղճորեն էր նախապատրաստել հանդիպումը: Այն անցավ գործնական և ակտիվ քննարկման մթնոլորտում: Մի խոսքով, միջոցառումը ծառայեց նախանշված նպատակին: Մասնակիցների զգալի մասը հանդես եկան ելույթներով, արվեցին արժեքավոր առաջարկություններ, տրվեցին գնահատականներ: Հրավիրված ընկերներից մեկը թեմայի վերաբերյալ երկու խոսքից հետո անցավ այլ հարթություն և ասաց, թե ԽՍՀՄ ճգնաժամին (1988-1990թթ.) Մոսկվայից կենտրոնը մի պատգամավորի ուղարկել է Երևան, մեկ այլ պատգամավորի՝ Բաքու՝ ասելով՝ գնացե՛ք, այդ երկրներում հայտարարե՛ք, թե ինչ եք տեղներդ նստել, անկախություն է սպասվում, բացատրե՛ք, որ Ղարաբաղը ձերն է: Եկողներն այդպես էլ արել են և կռիվ գցել երկու ժողովուրդների մեջ: Այդ հակամարտությունը կենտրոնի սարքած խաղն է: Տեսնելով դահլիճում գտնվողների տարակուսած դեմքերը՝ բանախոսն ավելացրեց, որ այդ մասին ինքը իմացել-կարդացել է Յութուբի ինտերնետային կայքէջից. չհավատացողները կարող են այնտեղ գտնել: Ամեն ինչ պարզ էր: Ապա շարունակեց, որ մեր երկրում տիրող վիճակը նրանից է, որ մենք ազգայնականներ ենք (մի բան, որից հայ ժողովուրդը ընդհանրապես զերծ է. վկա՝ մեր երկրում փոքրամասնություն կազմող ժողովուրդների կարծիքը), աշխարհը զարգացել, առաջ է գնացել, իսկ մենք հետ ենք մնացել: Սրանով զարգացրեց երկրորդ «փայլուն» միտքը: Ու բերեց ԱՄՆ-ի օրինակը,

թե տեսեք՝ Ամերիկայում ոչ մի ազգություն էլ չկա, մարդիկ ապրում են ազատ, ապահով երջանիկ կյանքով: Այս էլ պարզ էր, որ բանախոսը նախ չէր հասկանում՝ ինչ է ազգայնականը, և ինչ՝ ազգայինը, ապա մխրճված գլոբալիզացիայի հորձանուտը՝ պատկերացում չուներ դրա մասին: Ավելի ցավալին այն էր, որ այդպիսի «միտքը» ասվում էր ինտելեկտուալ լսարանում: Ինչ կարող ես անել, խոսում է: Կրկնակի ցավալին էլ այն էր, որ մեր իրականության մեջ որոշ մարդիկ նման ցնորամիտ-վերացական մտքերի հավատում են, դրանք ընդունում հալած յուղի տեղ: Ավարտենք այսքանով: Հիմա Արևելքի ու Արևմուտքի միջև հակամարտությունը գագաթնակետին է՝ իր ծավալներով, խորությամբ, կիրառվող միջոցների տեսակներով ու քանակով, ագրեսիվության աստիճանով, դաժանությամբ, մի խոսքով, չտեսնված ու չլսված չափերով: Հակամարտությունը համաշխարհային է, որևէ կասկած չկա: Այդ թոհուբոհի մեջ առաջ է տարվում երկու հասկացություն՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և գլոբալիզացիայի գաղափարը: Մտորումներս սրանց մասին են: Դեռ վաղնջական ժամանակներից մարդը պայքարել է իր ազատությունների, իրավունքների համար և շատ ու շատ բաների է հասել: Մեր օրերում այդ ուղղությամբ պայքարի գիծը զգալիորեն ծռվել-շեղվել ու տանում է մի կողմից դեպի մասսայական սպանություններ (նայեք ընթացող պատերազմների զոհերի քանակին), մյուս կողմից մարդու այլասերմանը: Անմեղ մարդկանց (անգամ մեղավորներին, ասում են, չի կարելի սպանել)՝ երեխա, կին, խաղաղ բնակչություն տասնյակ-հարյուր հազարներով այս օրերին մահաբեր զենքերի բաժին են դառնում, միլիոնները՝ խեղանդամ, միլիոնավոր մարդիկ զրկվում են տուն ու տեղից, դառնում փախստական, վտարանդի և այլն: Կարելի է ասել՝ այս աղետալին առանձնապես չի հուզում մարդու իրավունքների մասին Արևելքում և Արևմուտքում գիշեր ու ցերեկ կուրծք ծեծողներին: Նրանց այդպիսի պահվածքը, նաև միջազգային կազմակերպությունների, պետք է անվանել սոսկ վտանգավոր ճամարտակություններ, որոնց պղտոր ջրերում յուրաքանչյուրն իր անբարո որսն է անում: Այդ ամենը նման է հիվանդ ցանկությունների անբնական ճանապարհով հագուրդ տալուն: Գաղտնիք չէ, որ հիմա Արևմտյան քաղաքակրթության շրջանակներում առաջին պլանում է բնական շեղումներով ծնվածների իրավունքների հարցը: Բան չենք ասում. կենդանական, բուսական աշխարհում, հողում, ջրում լինում են անոմալիաներ: Դրանց դեմ եթե ոչ անհնար, ապա շատ ու շատ դժվար է պայքարելը: Ինչպես ասում են. «Այդպիսիներին էլ աստված է ստեղծել». հետևապես պետք է ապրեն, գոյատևեն, իրավունքներ ունենան, պարտականություններ կրեն: Ինչ խոսք, տրանսգենդերը ևս մեր քաղաքացին է, ինչ-որ առումով նաև բնատուր տուժանքով, պետք է ունենա երաշխավորված պաշտպանություն, հարգանք և ուշադրություն: Մինչդեռ այսօր այդ

պահանջների անվան տակ գոեհկացնում, հունից ևս մեկ անգամ շեղում են նմաններին՝ նրանց վերապահելով այնպիսի իրավունքներ, որոնք ոչ միայն արատավորում են իրականությունը, այլ նաև ընթացքը տանում մարդկային հասարակության բնականոն զարգացումին հակառակ խաթարում ճակատագրեր: Խոսքը վերաբերում է նույնասեռականների ամուսնություններին, այդպիսիններ կողմից երեխաներ որդեգրելուն, սեռափոխությանը, նման այլ երևույթներ օրենսդրորեն ձևակերպելուն, ապա հետևողականորեն առաջ մղելուն և դրանք աջ ու ձախ այս ու այն երկրներին պարտադրելուն: Պայման է դրվում՝ եթե նման երևույթներին օրենքի ուժ չեք տալիս, դուք ժողովրդավար չեք, չեք կարող անդամագրվել այս կամ այն միջազգային կառույցին, օգտվել որոշակի արտոնություններից, իրավունքներից և այլն: Բայց որ նշված ուղղություններով, այսպես ասած, զարգացումները հակառակ են մարդկայինի աստվածատուր ընթացքներին ու տանում են մարդու այլասերման, ոչինչ: Նույնասեռականների կազմած ընտանիքի որդեգրած առողջ երեխան ինչպիսի միջավայրում է մեծանալու, և նրանից ինչպիսի մարդ-քաղաքացի է ստացվելու՝ պարզ է: Կամ ո՞վ է թույլատրել խաթարել անմեղ մանկիկի ճակատագիրը, այդ նույնասեռական ծնողներից որի՞ն պետք է մայրիկ կանչի կամ հայրիկ. չէ՞ որ բնության մեջ իրական ծնողները բոլորովին այլ կերպ են ներկայանում... Մի խոսքով, բնականից-բնականոնից շեղում ունեցողին չպետք է և մեկ անգամ շեղել անհարկի, աննպատակ՝ դնելով նրան նոր խնդրի առաջ, արատավորելով հասարակության առողջ նկարագիրը, ի ծնե, ի բնե հաստատված անփոփոխելի կարգը: Թողեք հասարակությունը վերարտադրվի, ընթանա իր բնական ընթացքով. դրան խառնվելը միայն աղետ կբերի: Ինչ վերաբերում է տրանսգենդերին, թող ունենա քաղաքացու՝ երկրի սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքները: Ինչպես վերը նշված այնպես էլ մտացածին այլ, բնականին հակառակ գնացող սահմանումները ոչ մեկին պետք չեն՝ ո՛չ առողջին, ո՛չ հիվանդին: Պետք է ուղղակի հանգիստ թողնել, չհետապնդել՝ այդ թեման անընդհատ շահարկելով, չխառնվել նրանց ներքին կյանքին: Սեռ փոխելը մի՛թե հակառակ չէ Աստծո սահմանած կարգին, ինչի՞ համար է արվում դա: Մի բան է ապացուցում միայն՝ մարդը կորցնում է իր նորմալ մարդ լինելու ֆենոմենը: Ստացվում է, որ նման օրենք ընդունողները խրախուսում են այդպիսի ընթացքը: Մարդու իրավունքների, ազատությունների անվան տակ խրախուսվում են նաև գիշերային ու պոռնո ակումբներում, հասարակական նմանատիպ այլ վայրերում քաղաքակրթությանը միանգամայն խորթ սանձարձակ պահվածքը: Բայց դա այլ զրույցի նյութ է: Պետք է ասել՝ արևմուտքից վերցնելու, նրան ընդօրինակելու շատ բաներ կան, դրա՛նք վերցնենք: Իսկ այն, ինչ վերը նշեցինք, արմատապես պետք է մերժել:

Հիմա մի քանի խոսք գլոբալիզացիայի մասին: Երկիր մոլորակի բնակչությունն արդեն գերազանցել է 8 միլիարդը: Ասել է թե՝ 8 միլիարդից ավել անհատականություն կա: Անհատը կազմում է իր ճաշակի ընտանիքը, դրա նման երկրորդը չի լինում՝ նիստուկացով, կարգ ու սարքով, ներքին մթնոլորտով և այլն: Զևավորվում են որոշակի ձեռագրերով բնակավայրեր, բնակեցված ընդարձակ այլ տարածքներ՝ լեզվական, մշակութային ընդհանրություններով, սովորություններով, հոգեբանական ու բարոյական կապերով: Մի խոսքով, ստեղծված միջավայրը կազմում է մեր հասկացած ազգայինը՝ իր ժողովրդի հետ միասին: Արդյոք թվարկած այս արժեքները մարդ արարածը իր մեջ հենց այնպե՞ս է կրում, թե՞ դրանք կենսական են նրա համար: Երբ դիտարկում ենք երկրագնդի ժողովուրդների վերաբերմունքը իրենց ազգայինի նկատմամբ, տեսնում ենք, որ ամենաթանկը նրանց համար հենց դա է, ամեն ինչ անում են՝ այն ոչ միայն պահելու, այլ նաև հարստացնելու համար: Երբ ազգայինը մաքրամաքրվում- բյուրեղանում է, դառնում է համամարդկային: Հրաշալի է, որ երկրագնդի վրա եղած բոլոր ազգայիններն էլ համամարդկայինին բան են տվել ու շարունակում են տալ: Ասվածից հետևում է, որ անհատից մինչև համամարդկայինը մի շղթա, անբաժանելի մի իրականություն է, և առանց մեկի մյուսը գոյություն ունենալ չի կարող: Համամարդկայինի արմատը ազգայինն է, եթե նրան վնասես, չի լինի համամարդկայինը: Պետք է հատուկ ընդգծել, որ ազգային ասվածը դրականն է, կուտակածի զտանքը՝ զուրկ չարից, հետինից, և միշտ հակված է առաջընթացին ու զարգացմանը: Այդ գույներն են, որ ապահովում են համամարդկայինի հաճելի երանգավորումը: Գլոբալիստները փորձում են ջնջել ազգայինը՝ շեշտը դնելով համամարդկայինի, նրա առավելությունների վրա: Հատեցիր ազգայինը, չկա նաև համամարդկայինը, քանի որ նրանով է պայմանավորված երկրորդը: Հետևապես, ոչ թե պետք է կենտրոնանալ ազգայինը ջնջելու վրա, այլ այնպիսի պայմաններ ստեղծել, որ բոլոր ազգայիններն իրենց բնականոն զարգացմամբ առավելագույնս ինտեգրվեն՝ օգտվելու համամարդկային արժեքներից, ասել է թե՝ յուրաքանչյուրի ազգայինից: Պետք է ընդգծել, որ նշված ընթացքն անվախճան է՝ զարգացման անսահման հնարավորություններով: Սրբություններին չի կարելի ձեռք տալ, աշխարհի հզորները պետք ունեն լավ և հիմնավոր բաների մասին մտածելու, այլ ոչ թե ազգայինը գլխատելու: Այն ստեղծվում է պատմականի ամբողջական հենքի վրա, կրում իր մեջ հազարամյակներով կուտակածը: Կարդացե՛ք մերոնցից Հ. Թումայանին, Հ. Շիրազին, Մ. Սարյանին, մյուս մեծերին՝ չմոռանալով նաև համաշխարհային դասականներին: Ընդհանրացնելով միտքս՝ հանգում եմ հետևյալին. ստույգ չեմ կարող ասել՝ 20, 40 թե 50 կամ էլ ավելի տարիներ անց մեր օրերի անցուդարձերը հետհայաց հետազոտողը, վեր հանելով աշխարհի կտրվածքով նշված շեղումները, կասի. «Այդ մարդիկ մի՞թե ավելի կարևոր անելիք չունեին, որ զբաղվել են երիցս մերժելի անհեթեթություններով»: Ինչքան շուտ ձերբազատվենք նման «զարգացումներից», այնքան մարդկությունը կշահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՎԵՃ ՈՒ ԿՌՒՎ… ՀԱՇՏՈՒԹՅՈ՞ՒՆ)…….6

ԿԻՆԸ՝ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԳԱ՞ՐԴ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԹԵԼԱԴՐՈ՞Ղ, Թ՞Ե ԿԻՆ……19

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՆՐԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ……27

ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Գորիս, Սյունիքի 134/6
+374 93031083
www.sarc.am
mherkumunts@gmail.com
facebook

ՍՅՈՒՆԻՔԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

էլ. հրապարակում, Գորիս, 2024